

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄՏԵՓԱՆՅԱՆՅ ՄՏԵՓԱՆ ՄԻՀՐԱՆԻ**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ  
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
(1914-1918 թթ.)**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմա-  
կան գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Կարապետյան Մ.Ս.**

պատմական գիտությունների դոկտոր  
**Ստեփանյան Գ.Ս.**

պատմական գիտությունների դոկտոր  
**Գևորգյան Հ.Մ.**

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. նոյեմբերի 29-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈՅ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. հոկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պ. գ. թ., դոցենտ

**Հ.Ղ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին» ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ավելի հընտակ և գիտականորեն ճիշտ բացահայտել այն զգալի դերը, որ Հայաստանյայց եկեղեցին ունեցավ հայ ժողովրդի եղեռնի, արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվների, կամավորական շարժման զարթոնքի ժամանակ, ինչպես նաև գաղթականներին օգնելու գործում և այլն:

Առաջին աշխարհամարտի տարիները Հայ առաքելական եկեղեցու համար եղան շատ լարված և բուռն գործունեության տարիներ: Պատերազմից առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բարձրացրել էր Արևմտահայաստանում բարենորոգումների անցկացման խնդիրը:

Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողություններն սկսվելուն և արևմտահայ գաղթականների հայտնվելուն պես Հայ առաքելական եկեղեցին իր առջև նրանց օգնելու խնդիր դրեց: Գաղթականների հոսքի ավելանալու հետ միասին ուժեղացան նաև նրանց օգնելու աշխատանքները: Մինչ հայ գաղթականների և վիրավոր զինվորների օգնության Էջմիածնի Գլխավոր կարգադիր մարմնի ստեղծումը Մայր Աթոռը նաև զբաղվեց Կովկասյան ռուսական բանակի կազմում հայկական կամավորական ջոկատների կազմավորմամբ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո հայ ժողովրդի հետագա ճակատագրի ամբողջ պատասխանատվությունն ընկավ Հայ առաքելական եկեղեցու և հոգևորականության ուսերին: Հայ առաքելական եկեղեցու սպասավորները մասնակցություն ունեցան 1918 թ. թշնամու դեմ մղվող բոլոր կռիվներին: Մայր Աթոռ Սբ.Էջմիածնից 1918 թ. ամենագործուն մասնակցությունն ունեցավ հայոց ազգային օջախի՝ Հայոց Առաջին հանրապետության ստեղծմանը:

Այս առումով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Առաջին աշխարհամարտի տարիների գործունեության պատմության ուսումնասիրությունն ընդհանուր հիմնահարց է, որի հետազոտությունը վճռական նշանակություն ունի հայ ժողովրդի՝ Առաջին աշխարհամարտի շրջանի պատմության լուսաբանման համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿԸ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Աշխատության նպատակն է նորահայտ արխիվային փաստաթղթերի և նյութերի հիման վրա հետազոտել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը և գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում, Կիլիկիայում և այլ հայաբնակ տարածքներում, լուսաբանել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հայանպաստ և հայապահպան աշխատանքները՝ ցեղասպանության ենթարկված ժողովրդի արևմտահայ հատվածի բեկորները փրկելու համար հայ հոգևորականության մասնակցությունը Համաշխարհային պատերազմին, արևմտահայոց ինքնապաշտպանական կռիվներին, ինչպես նաև 1918 թ. մայիսյան հերոսամարտերին: Հետազոտել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և ցարական Ռուսաստանի կառավարության հարաբերությունները և հատկապես

Կովկասի ցարական վարչակարգի հետ ունեցած փոխհարաբերությունները, ինչպես նաև ցույց տալ այն զգալի դերը, որ Հայ եկեղեցին ունեցավ Հայոց Առաջին հանրապետության ստեղծման ժամանակ:

Առաջին անգամ, որպես մեկ խնդիր, հատուկ ուսումնասիրու-թյան առարկա է դառնում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, ինչպես նաև արևմտահայոց, արևելահայոց, ռուսահայոց և մնացած այլ թեմերի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին:

Առաջին անգամ առաջ է քաշվում և հետազոտվում հայ եկեղեցու դերը հայ ժողովրդի ցեղասպանության ժամանակ և Առաջին աշխարհամարտի տարիներին:

Ըստ արժանվույն զնահատվում է Մայր Աթոռի կողմից կազմակերպված «Եղբայրական օգնության» հանձնաժողովի դերը արևմտահայ, ասորի, հույն և այլ քրիստոնյա գաղթական ժողովուրդներին փրկելու գործում:

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Թեման ժամանակագրորեն հիմնա-կանում ընդգրկում է 1914-1918 թթ., այսինքն՝ Առաջին աշխարհամարտի տարիները: Սակայն, հաշվի առնելով, որ հիշյալ տարիների հետ կապված շատ հարցերի և խնդիրների լուսաբանումն առանց նախորդ տարիների՝ թեկուզև ուրվագծային ներկայացմամբ դառնում է գրեթե անհնարին, մենք ուշադրություն դարձրեցինք նաև Առաջին աշխարհամարտին նախորդած տարիներին: Նման մոտեցումը պայմանավորված է Հայ առաքելական եկեղեցու՝ Առաջին աշխար-համարտի տարիների ամբողջական պատմության ստեղծմամբ և հիմնա-հարցի գիտաքաղաքական կարևորությամբ: Պատահական չէ, որ պատմա-գրության մեջ կա այն թյուր կարծիքը, որ իբր Հայ առաքելական եկեղեցու դերն այդ տարիներին եղել է շատ նվազ և չնչին, և դա է պատճառը, որ հայ ժողովրդի ցեղասպանության և ինքնապաշտպանական կռիվների հարցերը լուսաբանե-լիս հայ պատմագրության մեջ ավելի մեծ տեղ է հատկացվում հասարակական և քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին, քան Հայ առա-քելական եկեղեցուն և հատկապես Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գործունեությանը:

Այդ տարիները Հայ առաքելական եկեղեցու պատմության մեջ եղան անե-նադժվարինը, բախտորոշը, ճակատագրականը, որովհետև պատմության կշեռքին դրված էր հայ ժողովրդի հետագա գոյության հարցը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Առենախոսության մեջ օգտա-գործված բոլոր աղբյուրագիտական նյութերի, փաստաթղթերի և գրականության նկատմամբ ցույց է տրված քննախույզ մոտեցում: Առենախոսության հեղինակը համեմատել և վերլուծության է ենթարկել բազմաթիվ փաստեր, կատարել անհ-րաժեշտ ճշտումներ, վեր է հանել 1914-1918 թթ. Հայ առաքելական եկեղեցու, «Եղբայրական օգնության հանձնաժողովի», Երևանի հայրապետական թեմի, Ատրպատականի հայոց թեմի, ինչպես նաև հայ զինվորական քահանայության պատմությանը վերաբերող կարևոր նոր տվյալներ, մանրամասնություններ և հայ հոգևորականության ներկայացուցիչների անուններ, որոնք երկար տարիներ պատմագրության մեջ եղել են անհայտ կամ քիչ հայտնի:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Աշխատանքն ունի կիրառական որոշակի նշանակություն: Առենախոսության մեջ կատարված հետևություններն ու եզրահանգումները, ինչպես նաև բերված վավերագրերն ու

փաստաթղթերը կարող են օգտագործվել Հայաստանի պատմության, հայ եկեղեցու և հայ ժողովրդի ցեղասպանության պատմության մասին գրվելիք դասագրքերում, ժողովածուներում և աշխատություններում: Այն, որպես հայոց պատմության սակավ ուսումնասիրված թեմաներից մեկը, կարող է գիտաճանաչողական նշանակություն ունենալ ընթերցող հասարակության համար:

Ատենախոսության նյութերը կարող են դասավանդվել հայագիտական և աստվածաբանական ֆակուլտետներում:

**ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի ընդլայնված ճիստում: Ատենախոսության թեմայով Հայաստանում և արտասահմանում հրատարակվել է ավելի քան 25 հոդված, կարդացվել են գեկուցումներ գիտական տարբեր նստաշրջաններում, այդ թվում՝ «Քրիստոնեություն և հայ իրականություն» (12-15 նոյեմբերի, 1998 թվին), Երևան-Օշական-Գանձասար, «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը», Երևան, 1998 թ., «Աստվածաշնչային Հայաստան», Օշական, հունիս, 1999 թ., «Մաշտոցյան ընթերցումներ», Օշական, 13-14 հոկտեմբերի, 1999թ., «Եկեղեցի-պետություն», Երևան, մարտ, 2000թ., «Քրիստոնյա Հայաստանը միջեկեղեցական հարաբերություններում», Մայր Աթոռ Սբ.Էջմիածին, 10-13 հունիսի, 2000թ., «Ռուսաստանի հարավը հնում և ներկայում», Բելգորոդ, դեկտեմբեր, 2006թ.:

**ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին գրեթե լուրջ և խորն ուսումնասիրության չի ենթարկվել: Պատերազմի ժամանակաշրջանը, ինչպես նաև ետպատերազմյան և խորհրդային ժամանակաշրջանները, թույլ չտվեցին լիակատար ուսումնասիրություն կատարել և լուսաբանել այն մեծ աշխատանքը, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կատարեց Առաջին աշխարհամարտի տարիներին:

Տարբեր ժամանակաշրջաններում որոշ հեղինակների կողմից ստեղծվել են Առաջին աշխարհամարտի տարիներին նվիրված աշխատություններ և մենագրություններ, որոնք մենք օգտագործել ենք ատենախոսության մեջ՝ որպես լրացուցիչ գրականություն, լրրացնելու բուն թեմային առնչվող հարցերը:

Գիտակցելով այն հանգամանքը, որ ժամանակի բերումով Հայ առաքելական եկեղեցին վերահաստատելու է իրեն վերապահված դիրքը և ազդեցությունը, դեռևս 1980-ական թվականների վերջերից մենք ձեռնամուխ եղանք Հայաստանի արխիվներում, Մատենադարանում և թանգարանների արխիվներում կուտակված, Հայաստանյայց եկեղեցուն նվիրված արխիվային փաստաթղթերի և վավերագրերի ուսումնասիրությանը:

Ներկա ատենախոսությանը գիտական նորույթ է հաղորդում առաջին հերթին այն հանգամանքը, որ վերը նշված հարուստ սկզբնաղբյուրների մեծ մասն առաջին անգամ է ամբողջությամբ դրվում գիտական շրջանառության մեջ:

Այդ պատճառով ատենախոսության աղբյուրագիտական հենքըն են դարձել Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) ֆոնդերը՝ 57. Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, 56. Էջմիածնի սուրբ Լուսավորչական Սինոդ, 48. Երևանի

հայոց թեմական վարչություն, 222. Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ, 113. Կովկասի փոխարքայի գրասենյակ, 121. Իմպերիալիստական պատերազմում գործող հայ կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու, 288. Թիֆլիսի հայոց ազգային կենտրոնական բյուրո, 32. Թիֆլիսի հայկական գյուղատնտեսական և տնայնագործական ընկերություն, 28. Կովկասի հայոց բարեգործական ընկերություն:

Վերոհիշյալից բացի՝ ատենախոսության մեջ օգտագործել ենք Մատենադարանի արխիվի Կաթողիկոսական դիվանի թղթ. 261, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի անձնական արխիվի թղթ. 31, Տիրայր վարդապետի անձնական արխիվի թղթ. 126, 132, 134, 261, Մատթևոս արքեպիսկոպոսի անձնական արխիվի թղթ. 168, Գարեգին արքեպիսկոպոսի անձնական արխիվի թղթ. 95, 98 վավերագրերը:

Հայ առաքելական եկեղեցուն նվիրված վարչատնտեսական և մշակութային կյանքին նվիրված նյութերը լուսաբանելիս հիմնվել ենք Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի՝ Հովսեփ Կուսիկյանի անձնական ֆոնդի վավերագրերի վրա:

Մեր ձեռքի տակ եղած հարուստ նյութերը, իսկ երբեմն նաև նրանցում առկա վկայությունների մեջ նկատվող որոշ հակասություններ մեզ հարկադրել են որդեգրել նրանց հանդեպ սոստեցման որոշակի սկզբունքներ:

Առավել հավաստի տեղեկություններ են հաղորդում այն փաստաթղթերը, որոնք ստեղծվել են հենց իրադարձությունների բովում՝ կոնդակները, որոշումները, հրամանները, բանաձևերը, նամակները:

Այս բոլոր արխիվներից մեր հայթայթած վավերագրերը գիտական կայուն հենք են ստեղծում շարադրանքի համար՝ գունարվելով եկեղեցական, հասարակական, պետական դիվանագիտական տարբեր գործիչների հուշերին, նամակներին և այլ փաստաթղթերի: Ատենախոսությունը գրելիս մենք օգտագործել ենք նաև մինչխորհրդային ժամանակաշրջանի, Սփյուռքի, խորհրդային ժամանակաշրջանի, Երրորդ հանրապետության և օտարերկրյա հեղինակների բազմաթիվ հիշողություններ, վկայություններ, ինչպես նաև փաստաթղթերի ժողովածուներ:

Մինչխորհրդային ժամանակաշրջանում լույս տեսած Ա-Դո-ի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի) «Մեծ դեպքերը Վասպուրականում» և «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները»<sup>1</sup> ուսումնասիրություններում հեղինակը լուսաբանում է արևմտահայության ծանր վիճակը նախքան Առաջին աշխարհամարտը շարունակվող բռնությունները: Փաստորեն դա Արևմտյան Հայաստան կատարած իր ուղևորության ժամանակ հավաքած նյութի արդյունքն էր<sup>2</sup>: Թ. Սկրտիչեանը Տիգրանակերտի նահանգի հայերի իրավիճակին է անդրադառնում իր հուշերի մեջ՝ «Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիիրտերու գազանութիւնները»:

<sup>1</sup> Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում, Եր., «Լույս» տպ. 1917, 488 էջ: Նույնի Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., «Կուլտուրա» հրատ., 1912, 406 էջ:

<sup>2</sup> Սկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քիիրտերու գազանութիւնները, Գահիրե, Գ.ճիհանեան տպ., 1919, 127 էջ:

Մ.Օրմանեանն իր փոքրածավալ «Թիւրքահայ աղէտը»<sup>3</sup> գրքուկում կարողացավ պատմականորեն ճիշտ ներկայացնել արևմտահայերի ծանր վիճակը Մեծ եղեռնի ժամանակ: Ռուբեն քահանա Բեկուլյանը մինչ պատերազմը իր՝ Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդությունից անմիջապէս հետո հրատարակեց իր հուշերը՝ «Թուրքահայաստանով»<sup>4</sup> աշխատությունը, որտեղ կարելի է գտնել Վանի և արևմտահայ այլ քաղաքների ու տեղանքների հայ բնակչության իրավիճակի մասին արժեքավոր տվյալներ: Ռուսահայոց թեմերի իրավիճակին են անդրադարձել Բաբգեն վարդապետ Աղավելյանն իր «Ս. Էջմիածնի կալվածքները ու նրանց բարեկարգութեան ծրագիրը»<sup>5</sup> և Մխիթար վարդապետ Տեր-Սկրտչյանն իր «Հայերը Ռուսաստանում»<sup>6</sup> ուսումնասիրություններում:

Սփյուռքահայ հեղինակներից Դ. Աղամեանը իր «Կիլիկեան դրուագներ, Ֆընտըճագի հերոսամարտը»<sup>7</sup>, ինչպես նաև Տ. Անդրեասեանը «Զէյթունի տարագրութիւնը եի Սուլտիոյ ապստամբութիւնը»<sup>8</sup>, Վ. Արծրունին «Շապին Գարահիսարի ինքնապաշտպանությունը 1915»<sup>9</sup>, Ա.Դարբինեանը «Հայ ազատագրական շարժման օրերէն»<sup>10</sup>, Ա.Կեօրկիզեանը «Վասպուրականի հերոսամարտը»<sup>11</sup>, Ա. Հայկազը «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը»<sup>12</sup>, Ա.Տարոնեցին «Տարոնապատում»<sup>13</sup>, Հ.Տեր Ղազարեանը «Հայկական Կիլիկիա»<sup>14</sup> և Ա.Քէչեանը իր «Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, 1915 – 1918»<sup>15</sup>, իրենց հուշերում և աշխատություններում անդրադարձել և հետազոտման են ենթարկել արևմտահայության հերոսական դիմադրությունը՝ ճիշտ գնահատական տալով և ողջ հակաթուրքական պայքարին:

<sup>3</sup> **Օրմանեան Մ.**, Թիւրքահայ աղէտը, Էջմիածին, տպ., Մայր Աթոռ, 1919, 48 էջ:

<sup>4</sup> **Бекгуляев Р.**, По Турецкой Армении, Ростов на/Д, тип. Я.М.Искандарова, 1914, 94 с.

<sup>5</sup> **Բաբգեն վարդապետ**, Ս.Էջմիածնի կալվածքները ու նրանց բարեկարգութեան ծրագիրը, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի տպ., 1908, 48 էջ:

<sup>6</sup> **Մխիթար վարդապետ**, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, Ս.Էջմիածնի տպ., 1906, 136 էջ:

<sup>7</sup> **Աղամեան Դ.**, Կիլիկեան դրուագներ, Ֆընտըճագի հերոսամարտը, Փարիզ, «Ներսիսյան Կ.» տպ., 1921, 40 էջ:

<sup>8</sup> **Անդրեասեան Տ.**, Զէյթունի տարագրութիւնը եի Սուլտիոյ ապստամբութիւնը, Հալեպ, «Գոլենճ» տպ., 1935, 118 էջ:

<sup>9</sup> **Արծրունի Վ.**, Շապին Գարահիսարի ինքնապաշտպանությունը 1915, Թեհրան, «Ալիք» տպ., 1956, 72 էջ:

<sup>10</sup> **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (հուշեր), 1890–1940, Փարիզ, Հայ ազգային հիմնադրամ, 1947, 640 էջ:

<sup>11</sup> **Կեօրկիզեան Ա.**, Վասպուրականի հերոսամարտը, Պէյրուք, Թեքեյան մշակ. միություն, 1965, 271 էջ:

<sup>12</sup> **Հայկազ Ա.**, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նիւ Եորք, «Մշակ» տպ., 1957, 459 էջ:

<sup>13</sup> **Տարոնեցի Ա.**, Տարոնապատում, Բեյրուք, տպ. «Տոնիկյան», 1966, 530 էջ:

<sup>14</sup> **Տեր Ղազարեան Հ.**, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, տպ. կաթողիկոսութեան հայոց, 1966, 322 էջ:

<sup>15</sup> **Քէչեան Ա.**, Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն, 1915 – 1918, Բեյրուք, «Արարատ» տպ., 1938, 288 էջ:

Ա.Ալպոյաճեանն իր «Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց»<sup>16</sup>, Կ.Գաբրիէանը «Եղեռնապատում Փոքուն Հայոց և Նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ»<sup>17</sup>, Յ. Գալֆաեանը «Գիրք Ելից Հայոց»<sup>18</sup> իրենց մենագրութիւններուն անդրադարձել են արևմտահայոց նահանգներուն տեղի ունեցած իրադարձութիւններին: Արևմտահայ եկեղեցու գործունեության լուսաբանման համար մեզ համար հիմնական գրական նյութ են ծառայել Ջավեն արքեպիսկոպոս Եղիաեանի «Պատրիարքական յուշերս»<sup>19</sup>, Թեոդիկի (Թեոդոս Լաբճինճյանի) «Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարիներին»<sup>20</sup>, Բարզեն Ա. Կյուլեսերեան կաթողիկոսի «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ»<sup>21</sup>, Ս.Աղավնունու «Միաբանք և այցելութիւն հայ Երուսաղեմի»<sup>22</sup>, Յ.Աճէմեանի «Տէր Ներսէս արքեպիսկոպոս Մելիք Թանգեան»<sup>23</sup> արժեքավոր աշխատութիւնները: 1918թ. մայիսյան հերոսամարտերին է նվիրված Ս.Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը»<sup>24</sup>, Յ.Գանգրունու «Հայաստան 1918 և հայ քաղաքական միտքը»<sup>25</sup> մենագրութիւնը, որուն հեղինակը սփյուռքահայ պատմաբանի աչքերով լուսաբանում է հայ ժողովրդի իրադրութիւնը և պայքարը 1918թ.:

Նորհորայի ժամանակաշրջանում Առաջին աշխարհամարտի տարիներին Արևելյան և Արևմտյան Հայաստանի իրադարձութիւններին են նվիրված Ս.Արզումանյանի «Հայաստանը 1914- 1917թթ.»<sup>26</sup> մենագրութիւնը, ինչպէս նաև Կ.Թառոյանի «Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին»<sup>27</sup> ուսումնասիրութիւնը և Յ.Մելիքյանի «Յեղափոխական շարժումները Կովկասյան բանակում»<sup>28</sup>: Լ.Նորաշխարհյանի

<sup>16</sup> **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց, Կահիրէ, «Նոր աստղ» տպ., 1952, 1751 էջ: Նույնի՝ Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, Մալաթ. կրթ. ընկ., 1961, 1535 էջ:

<sup>17</sup> **Գաբրիէան Կ.**, Եղեռնապատում Փոքուն Հայոց և Նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Բոստոն, տպ. «Մշակ», 1924, 604 էջ:

<sup>18</sup> **Գալֆաեան Յ.**, Գիրք Ելից Հայոց, Պէյրութ, «Տոնիկյան» տպ., 1955, 651 էջ:

<sup>19</sup> **Ջավեն արքեպիսկոպոս**, Պատրիարքական յուշերս, Գահիրէ, «Նոր աստղ» տպ., 1947, 424 էջ:

<sup>20</sup> **Թեոդիկ**, Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարիներին, Լիւ-Յօրք, 1985, էջ 656:

<sup>21</sup> **Բարզեն Ա կաթողիկոս**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչև մեր օրերը) Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1980, 1446 էջ:

<sup>22</sup> **Աղավնունի Մ.**, Միաբանք և այցելութիւն հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, ս. Հակոբյանց տպ., 1929, 544 էջ:

<sup>23</sup> **Աճէմեան Յ.**, Տէր Ներսէս արքեպիսկոպոս Մելիք Թանգեան, Վենետիկ, Միսիթարյան տպ., 1926, 51 էջ:

<sup>24</sup> **Աֆանասյան Ս.**, Սարդարապատի հաղթանակը, Եր., Իրավ. գրակ. հրատ., 1991, 111 էջ:

<sup>25</sup> **Գանգրունի Յ.**, Հայաստան 1918 և հայ քաղաքական միտքը, Բէյրութ, «Տոնիկյան» տպ., 1984, 301 էջ:

<sup>26</sup> **Արզումանյան Մ.**, Հայաստանը 1914 – 1917թթ., Եր., «Հայաստան» հրատ., 1969, 779 էջ:

<sup>27</sup> **Թառոյան Կ.**, Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Եր., «Հայաստան» հրատ., 1980, 211 էջ:

<sup>28</sup> **Մելիքյան Յ.**, Յեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914 – 1917թթ.), Եր., «Հայաստան» հրատ., 1975, 353 էջ:



«Ձեյթունը 1914-1921թթ.»<sup>29</sup> և Յ.Պողոսյանի «Ձեյթունի պատմությունը: 1409-1921 թթ.»<sup>30</sup> մենագրություններում մանրագնին ուսումնասիրված են Ձեյթունի ապստամբության հետ կապված հարցերը և գեյթունցիների հետագա ծակատագիրը:

Իրենց գիտական մեծ արժեք ներկայացնող հետազոտությունները հայ ժողովրդի հերոսական էջերին են նվիրել Ա.Համբարյանը՝ «Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը»<sup>31</sup>, Յ.Թուրջյանը՝ «Սարդարապատի հերոսամարտը»<sup>32</sup>, Ռ.Սահակյանը՝ «Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին»<sup>33</sup>:

Ռուսաց լեզվով հրատարակված հայ հեղինակների աշխատությունների թվին, որոնք լուսաբանում են Առաջին աշխարհա մարտի տարիներին Կովկասում, Արևմտահայաստանում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած անցուդարձը, կարելի է դասել մեր կողմից լայնորեն օգտագործված Ս.Հակոբյանի<sup>34</sup>, Ա.Հարությունյանի և Ջ.Կիրակոսյանի աշխատությունները: Հատկապես ուշագրավ է Ա.Հարությունյանի «Կովկասյան ռազմաճակատը 1914-1918թթ.»<sup>35</sup>, ուր հեղինակը լայնորեն լուսաբանում է հայ կամավորական ջոկատների գործողությունները, ինչպես նաև Ջ.Կիրակոսյանի «Արևմտահայաստանը Առաջին աշխարհամարտի տարիներին» բովանդակալից մենագրությունը<sup>36</sup>:

Օտարերկրյա հեղինակներից մենք ատենախոսության մեջ օգտագործել ենք Վ.Գուստի<sup>37</sup>, Բ.Էքարտի<sup>38</sup>, Յ.Լեփսիուսի<sup>39</sup>, Ա.Բարբիի<sup>40</sup>, Գ.Գիբոնսի<sup>41</sup>, Լորդ Բերթի<sup>42</sup>, Ս.Պալեոլոգի<sup>43</sup>, Գ.Ֆիրբյուխերի<sup>44</sup> հուշերը և մենագրությունները:

<sup>29</sup> Նորաշխարհյան Լ., Ձեյթունը 1914 – 1921թթ., Եր., ՀՍՄ ԳԱ հրատ., 1989, 271 էջ:

<sup>30</sup> Պողոսյան Յ., Ձեյթունի պատմությունը: 1409 – 1921 թթ., Եր., «Հայաստան», 1969, 457 էջ:

<sup>31</sup> Համբարյան Ա., Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Եր., «Գիտելիք» հրատ., 1990, 86 էջ:

<sup>32</sup> Թուրջյան Յ., Սարդարապատի հերոսամարտը, Եր., «Հայաստան» հրատ., 1969, 291 էջ:

<sup>33</sup> Սահակյանը Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Եր., «Գիտություն» հրատ., 2005, 401 էջ:

<sup>34</sup> Акопян С., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой мировой войны, Е., 1967, 263с.

<sup>35</sup> Арутюнян А. Кавказский фронт 1914 – 1917, Ер., Изд.-во «Айастан», 1971, 415 с.

<sup>36</sup> Կրակոսյան Ժ. Западная Армения в годы Первой мировой войны. Ер.: Изд.-во Ерев. ун-та, 1971, 475 с.

<sup>37</sup> Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915 – 1916թթ., Եր., 2005, 88 էջ:

<sup>38</sup> Էքարտ Բ., Ապրած օրերը Ուրֆայում, Եր., ՀԳԱ հրատ., 1990, 63 էջ:

<sup>39</sup> Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914 – 1918թթ., Եր., Լաքր փրինթ, 2006, 512 էջ:

<sup>40</sup> Барви А. В стране ужаса. Мученица Армения. Тифлис, тип. Меликова, 1919, 151 с.

<sup>41</sup> Гивонс Г. Последние извещения в Армении. Пг., Военная типография, 1916, 31с.

<sup>42</sup> Лорд Берти. За кулисами Антанты. Дневник Британского посла в Париже 1914 – 1919. М.-Л.: Госиздат, 1927, 270с.

<sup>43</sup> Палеолог М. Царская Россия во время мировой войны. М.: Международные отношения, 1991, 240с.

<sup>44</sup> Фирвюхер Г. Армения 1915. Уничтожение Турцией культурного народа. Е., 1991, 95с.

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործել ենք փաստաթղթերի ժողովածուներ, որոնց թվում՝ ակադեմիկոսներ Մ.Ներսիսյանի<sup>45</sup>, Վ.Միքայելյանի<sup>46</sup> և Ա.Բեհրուդյանի<sup>47</sup> կողմից կազմված ժողովածուները, ինչպես նաև «Անդրանիկ Օզանյան»<sup>48</sup> փաստաթղթերի ժողովածուն:

Ատենախոսության մեջ օգտագործել ենք մեծաքանակ պարբերական մամուլ, որոնց թվում՝ «Ազգ», «Ալիք», «Արարատ», «Արև», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Գաղափար», «Երիտասարդ Հայաստան», «Էջմիածին», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Հանդես ամսօրեա», «Հանդես Երևանի համալսարանի», «Հայկական բանակ», «Հայրենիք», «Հառաջ», «Հասկ», «Հորիզոն», «Մշակ», «Պատմա-բանասիրական հանդես», «Վեմ» և այլ թերթեր ու ամսագրեր:

Թվարկված ժողովածուներն ու ամսագրերում տպագրված հոդվածները գիտական շրջանառության մեջ դնելով որպես նոր վավերագրեր 20-րդ դարի սկզբի Հայ առաքելական եկեղեցու պատմության վերաբերյալ՝ ստեղծվում են որոշակի նախադրյալներ՝ լրացնելու և ամբողջացնելու Հայաստանյայց եկեղեցու պատմությունը:

Խորությամբ գիտակցելով Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, համակողմանի ուսումնասիրության գիտական, հոգևոր և քաղաքական կարևոր նշանակությունը՝ հնարավորինս համակողմանիորեն ուսումնասիրել ենք այդ հիմնահարցը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆՊԱՎՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք զըլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու նպատակը, ժամանակագրական շրջանակները, խնդրի մշակվածությունը, սկզբնաղբյուրների ու տղպագիր գրականության քննական տեսությունը:

*Առաջին զըլուխը՝* «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Առաջին աշխարհամարտի նախօրյակին» բաղկացած է երեք ենթազըլուխներից՝ ա) Ռուսահայոց թեմերը Առաջին աշխարհամարտի նախօրյակին, բ) Հայկական հարցի վերաբացումը, գ) Ատրպատականի հայությունն Առաջին աշխարհամարտի տարիներին:

XIX դարի վերջին, XX դարի սկզբին Ռուսաստանի միապետական վարչակարգի քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցու և հատկապես Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի նկատմամբ շարունակում էր մնալ ծանր ու բարդ:

<sup>45</sup> Геноцид армян в Османской империи, II изд. Под редакцией М.Г.Нерсисяна. Ереван.: Айастан, 1981, 904с.

<sup>46</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции 1913 – 1919. Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник, составитель В.Микаелян. Ер.: Изд-во “Гитутюн”, 1995, 643 с.

<sup>47</sup> Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, կազմող՝ Ա.Բեհրուդյան, Բ.,Գ.,Դ. հատ., Եր., «Անահիտ» հրատ., 1996 – 1997թթ.:

<sup>48</sup> “Андраник Озаян. Документы и материалы”, “Вестник архивов Армении”, Ер., тип. 1 1, 1991, 495с.

Ցարական հետադիմական կառավարությունը և Կովկասի կառավարիչներն իրենց գործունեությամբ ջանում էին Հայ առաքելական եկեղեցին զրկել իր ազդեցությունից և հեղինակությունից հայ ժողովրդի մեջ: Ներքին գործերի նախարար Վ. Կ. Պլենեն, Կովկասի կառավարիչներ Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովը, Գ. Ս. Գոլիցինը, Ս. Ա. Շերեմետևը ունեին հայատյաց և հակաեկեղեցական խիստ ընդգծված դիրքորոշում:

1906 թ. Կովկասի նոր փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի նշանակմամբ ցարիզմի քաղաքականությունը հայ ժողովրդի և Հայ առաքելական եկեղեցու հանդեպ կտրականապես փոխվեց: Նոր փոխարքան իր գործունեության հենց սկզբից ջանքեր գործադրեց, որպեսզի վերադարձվեին 1903 թ. հայ եկեղեցուց առգրավված կալվածքները և ունեցվածքը, և վերաբացվեին հայոց ծխական դպրոցները, որովհետև նա գիտակցում էր, որ ինչպես Կովկասի նախորդ վարչակարգի, այնպես էլ Ռուսիո կայսեր հակաեկեղեցական և հակահայկական քայլերը սխալ էին և վնասակար Ռուսաստանի «հարավային» զավթողական քաղաքականության համար: Վորոնցով-Դաշկովը մեծ ուշադրություն էր դարձնում Մայր Աթոռ Սբ.Էջմիածնի հետ բարեկամական կապերն ամրապնդելուն՝ գիտակցելով նրա կարևոր նշանակությունը, դիրքը և համայն աշխարհի հայերի վրա ունեցած ազդեցությունը:

Ինչպես դիպուկ գրել է պատմաբան Ա.-Ռոն. «Կովկասի նախկին փոխարքաներից և կառավարիչներից ոչ մեկը այնպես մոտիկից չի կարողացել ճանաչել Կովկասը և ըմբռնել ռուսական շահը, ինչպես Վորոնցով-Դաշկովը»<sup>49</sup>:

XX դարի սկզբին Հայ առաքելական եկեղեցին մի հզոր կազմակերպություն էր, որն ուներ մի շարք հարուստ և կայուն թեմեր և բաժանված էր Արևմտահայոց, Ռուսահայոց, Արևմտյան Թուրքիայի, Իրանի և Սփյուռքի այլ թեմերի: Ռուսական կայսրության տարածքում էին գտնվում Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, Աստրախանի, Վրաստանի, Շամախու, Ղարաբաղի և Երևանի թեմերը: Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը ռուսահայոց թեմերից ամենախոշորն էր, որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մոլդավիայի, Դրինի, Մերձբալթիկայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի և այլ տարածքներ: Թեմակալ առաջնորդն էր Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանը: Նոր Նախիջևանի վիճակի փոխանորդն էր Գևորգ վարդապետ Չորեքչյանը: Աստրախանի թեմն ընդգրկում էր Աստրախանի, Սարատովի, Ստավրոպոլի նահանգները, Թերեքյան, Կուբանի շրջանները, Դաղստանը, Սևծովյան նահանգները, Անդրկասպյան երկիրը, Թուրքեստանը և Սիբիրը: Թեմակալ առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը: Վրաստանի և Իմերեթիայի թեմն ընդգրկում էր Թիֆլիսի, Քութայիսի և Գանձակի նահանգները: Թեմի հոգևոր առաջնորդն էր Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը: Երևանի հայրապետական թեմի փոխթեմակալն էր Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը: Թեմի կազմի մեջ էին Կարսի, Հին Նախիջևանի, Սյունյաց, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի փոխանորդությունները և Սուրմալուի ու Թալինի գործակալությունները: Շամախու թեմն ընդգրկում էր Բաքվի նահանգը և Դաղստանի մի մասը: Թեմի առաջնորդն էր Կարապետ եպիսկոպոս

<sup>49</sup> Ա.-Ռո, Մեծ դեպքերը Վասպուրականում..., էջ 88:

Տեր-Մկրտչյանը: Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդն էր Ջավեն վարդապետ Բաբայանը: Ռուսահայոց թեմերն ունեին 45000 դեսյատին հողատարածություն, որից տարեկան ստացվում էր մոտ 51000 ռուբլի եկամուտ<sup>50</sup>: Ռուսահայաստանում էր գտնվում հայ ժողովրդի գլխավոր հոգևոր կենտրոնը՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը:

Այսպիսով, չնայած այն բոլոր խոչընդոտներին և արգելքներին, որոնք ժամանակ առ ժամանակ ստեղծվում էին Հայ եկեղեցու համար Ռուսական կայսրության առանձին պետական կառույցների և պաշտոնյաների կողմից, այնուամենայնիվ Հայ եկեղեցին մնում էր կայուն և ազդեցիկ: Նա ուներ հարուստ ծխական համայնքներ, մեծաքանակ եկեղեցիներ, վանքեր և սովորաբար հավատացյալ ժողովուրդ:

Ռուսական պետության տարածքից դուրս գտնվող, սակայն Մայր Աթոռին ենթակա Ատրպատականի թեմը ղեկավարվում էր թեմակալ առաջնորդ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանի կողմից: Թեմի կազմում էր Սուլթանաբաղի և Համադանի փոխանորդությունը՝ խորեն վարդապետ Լազարյանի ղեկավարությամբ:

Հայոց եկեղեցին ամեն կերպ աջակցում էր, որպեսզի Արևմտյան Հայաստանում անցկացվեր 1878թ. Բեռլինի վեհաժողովում հաստատված բարենորոգումների ծրագիրը: Այդ գործն իրականացնելու համար Գևորգ Ե-ն հորդորում էր Ռուսաստանի կառավարությանը առաջ քաշել Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը: 1912 թ. նոյեմբերի 10-ի թ. 1482 կոնդակով Գևորգ Ե-ն անվանի հասարակական գործիչ Պողոս Նուպար փաշային նշանակեց ազգային պատվիրակության նախագահ և խրատ էր տալիս նրան զբաղվել թուրքահայոց վիճակի բարելավմամբ՝ հենվելով Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի վրա: Չնայած Թուրքիայի կառավարության հզոր դիմադրությանը՝ բարենորոգումների ծրագիրը հաստատվեց, և 1914 թ. մայիսին հայկական նահանգների համար արդեն ընտրվեցին վերատեսուչներ՝ հողանոցի Վեսթենենկը և նորվեգացի Հոֆը: Հոֆը նշանակվեց Վան-Էրզրում, Սվազ-Տրապիզոն հատվածի վերատեսուչ, իսկ Վեսթենենկը՝ Բիթլիս-Խարբերդ-Դիարբեքիր հատվածի: Թուրքերն ամեն կերպ խոչընդոտում էին բարենորոգումների անցկացումը և միաժամանակ վերատեսուչների ամբողջ գրասենյակի խորհրդակալներին նշանակում էին թուրք ազգայնամուլներից<sup>51</sup>:

Եթե բարեփոխումներն արդյունավետ չէրան, ապա դրա պատճառը հանգամանքների զուգահեռակամ էր և երիտթուրքական կառավարության խիստ դիմադրությունը: Նրանք համոզված էին, որ բարեփոխումների անցկացումը կհանգեցնի հայկական մարզերի անջատմանը Օսմանյան կայսրությունից:

Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը վերջ դրեց հայկական մարզերում բարենորոգումների իրականացմանը: Վեսթենենկը դեռ Կոստանդնուպոլսում էր գտնվում, իսկ Հոֆը հագիվ հասել էր Վան, երբ Թուրքիայում զորաժողով հայտարարվեց: 1914թ. օգոստոսի 16-ին Հոֆը

<sup>50</sup> «Արարատ» 1907, հ. 1, էջ 66:

<sup>51</sup> Մատենադարանի արխիվ, թղթ. 84 գ., վավ. 75; ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 86, թ. 1:

ներքին գործոց նախարար Թալեաթից հեռագիր ստացավ. «Ի նկատի ունենալով համաեվրոպական պատերազմը և զորաժողովը մեր երկրում, առայժմ ռեֆորմների գործադրությունը դադարեցվում է, ուստի բարեհաճեք վերադառնալ Պոլիս»<sup>52</sup>: Դրանով հայկական բարենորոգումների հարցը մնաց թղթի վրա:

Արխիվային փաստաթղթերը վկայում են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի այն զգալի դերի մասին, որ նա կատարել է բարեփոխումների անցկացման գործում:

1914 թ. թուրքերը հարձակվեցին Յուսիսային Իրանի տարածքի վրա, որտեղ հնադարից ապրում էր տեղի էթնիկ հայ ազգաբնակչությունը, որ փաստացի ղեկավարվում էր Ատրպատականի թեմական վարչության կողմից, և որի թեմակալ առաջնորդն էր Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը, որը վայելում էր Իրանի իշխանությունների հարգանքը և ուներ նրանց աջակցությունը: Այս տարածաշրջանում հայերը կոմպակտ ապրում էին Թավրիզում, Մարաղայում, Սալմաստում, Խոյում, Ուրմիայում և այլն:

Ներխուժած թուրքական զորքին սատարում էր տեղի թուրք ազգաբնակչությունը՝ Ղարադաղի և Մակուի թուրք խաների զլխավորությամբ:

Ատրպատականի հայ ազգաբնակչությունը գաղթեց դեպի Ջուլֆա, իսկ հետո, խուսափելով թուրքական զորքից, անցավ Ձանգեզուր, Նախիջևան և Ղարաբաղ: Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի 69 հայաբնակ գյուղերում տեղավորվեցին 8.500 գաղթականներ, որոնցից 2500-ը ասորի և այլ քրիստոնյաներ էին, իսկ մնացածը՝ հայեր: Գաղթականներին օգնելու համար ստեղծվեց Նախիջևան-Շարուր-Ղարալազյազ-Սալմաստի «եղբայրական օգնության» հանձնաժողովը՝ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանի նախագահությամբ:

Նախիջևան-Շարուր-Ղարալազյազ-Սալմաստի «եղբայրական օգնության» հանձնաժողովի տեղեկագրի մեջ մասնավորապես գրված էր, որ 1914թ. դեկտեմբերին Ատրպատականի ռուսական զորամասին կարգադրվել է ընդհանուր նահանջ, որի պատճառով զորքի հետ գաղթել է տեղի ողջ քրիստոնյա ազգաբնակչությունը՝ մոտ 44 հազար գաղթականներ, որոնցից 24000 հայեր (Սալմաստից՝ 15000, Ուրմիայից՝ 4000, Թավրիզից՝ 3000, Խոյից՝ 2000) և 20000 ասորի և այլ քրիստոնյաներ:

1915թ. հունվարի 10-ին Նախիջևանում կայացած ժողովում Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի «եղբայրական օգնության» հանձնաժողովի նախագահ է ընտրվում Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը: Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի 69 հայաբնակ գյուղերում տեղավորվում են 850 գաղթականներ, որոնցից 2500-ը ասորի և այլ քրիստոնյաներ էին, իսկ մնացածը՝ հայեր:

*Երկրորդ գլուխը*՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին», բաղկացած է 7 ենթագլուխներից՝ ա) Հայ եկեղեցու վիճակը Արևմտյան Հայաստանում և ամբողջ Օսմանյան կայսրության տարածքում, բ) Կովկասի ռուսական վարչակազմի հակահայկական գործունեությունը, գ) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օգնությունը բռնազաղթի ենթարկված արևմտահայությանը, դ) Կամավորական

<sup>52</sup> ՀԱԱ, ֆ. 316, ց. 1, գ. 50, ք. 32, ֆ. 57, ց. 2, գ. 1960, ք. 4-5:

շարժումը և զինվորական քահանայության ստեղծումը, ե) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատվիրակությունը գրավված տարածքներում, գ) Էրզրումի (Կարինի) և Տրապիզոնի գրավումը և նրանց հետագա ճակատագիրը, է ) Վանի ինքնապաշտպանական կռիվները և հայ հոգևորականության գործունեությունը:

Մինչև Առաջին աշխարհամարտը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում բոլոր բնագավառներում հայերը շատ հզոր էին և ազդեցիկ: Ինչպես կրթության, այնպես էլ առևտրի և քաղաքականության մեջ հայերը միշտ ունեին իրենց կայուն տեղը: Սակայն, այնուամենայնիվ, հայերը պահանջում էին անկախություն կամ լայն ինքնավարություն: Մի բան, որը թուրքական կառավարությունը չէր կարող թույլ տալ՝ գիտակցելով, որ անկախության դրոշը կբարձրացնեն Օսմանյան Թուրքիայում ապրող բոլոր հպատակ ժողովուրդները:

Առաջին աշխարհամարտը հարմար առիթ էր՝ մեկընդմիշտ լուծելու Հայկական հարցը՝ բնաջնջելով Օսմանյան կայսրության ողջ հայությանը: Բռնությունները հայերի նկատմամբ սկսվեցին Կոստանդնուպոլսից և տարածվեցին Օսմանյան կայսրության ողջ տարածքով: Տարագրվեց և կոտորվեց Սեբաստիայի, Տիգրանակերտի, Բալուխի, Խարբերդի, Տարոնի, Էրզրումի, Տրապիզոնի և այլ մարզերի հայությունը:

Այնուհանդերձ Օսմանյան կայսրության տարածքում գործում էին դիմադրության օջախներ՝ Շապին-Պարահիսարում, Սասունում, Եօզղաթում, Զեյթունում, Ուրֆայում, Ֆրնտըճագում:

Օսմանյան կայսրության տարածքում հայոց եկեղեցու ղեկավարությունն իրականացվում էր երեք գլխավոր հոգևոր հովվապետերի՝ 1913 թվականի օգոստոսի 3-ին ընտրված Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանի, 1902 թվականին ընտրված Մեծի Տանն Կիլիկիո (կամ Սսի) կաթողիկոս Սահակ Բ Խապայանի և Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Դանիել արքեպիսկոպոս Հակոբյանի կողմից<sup>53</sup>:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությանը ենթակա էին 1. Վանի թեմը՝ առաջնորդական փոխանորդ եզնիկ վարդապետ Ներկարարյանի գլխավորությամբ: Թեմի կազմում էին Արճեշի, Աղիլճնագի, Աղբակի փոխանորդությունները և Վարագա վանքը: 2. Բաղեշի թեմ՝ Սուրեն վարդապետ Գալենյանի առաջնորդությամբ: Թեմի կազմում էին Տարոնի, Բուլանուղի, Մանագլերտի փոխանորդությունները: 3. Սեբաստիայի թեմ՝ Գնել եպիսկոպոս Գալենքերյանի առաջնորդությամբ: Թեմի կազմում էին Եվրոկիայի, Շապին-Պարահիսարի և Ամասիայի փոխանորդությունները: 4. Կարնո թեմ՝ Սմբատ եպիսկոպոս Սաստեթյանի առաջնորդությամբ: Թեմի կազմում էին Բասենի, Երզնկայի, Զղիի, Բաբերդի, Խնուսի, Բայազետի, Ալաշկերտի և Դիադինի փոխանորդությունները: 5. Խարբերդի թեմ՝ Պսակ վարդապետ Տեր-Խորենյանի առաջնորդությամբ: Թեմի կազմում էին Արաբկիրի, Ալցնի, Չարսանճագ-Չմշկածագի փոխանորդությունները: 6. Տիգրանակերտի թեմ՝ Սկրտիչ վարդապետ Զլղատյանի առաջնորդությամբ: Թեմի կազմում էր Բալուխի փոխանորդությունը: 7. Գաղատիայի թեմ՝ Բաբգեն եպիսկոպոս Կյուլեսերյանի

<sup>53</sup> **Բաբգեն Ա Աթոռակից կաթողիկոս**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ..., էջ 913-920:

առաջնորդությամբ: Թեմի կազմում էին Յոզղաթի և Կեսարիայի փոխանորդությունները: 8.Նիկողեմիայի թեմի առաջնորդն էր Ստեփանոս արքեպիսկոպոս Յովակիմյանը: 9.Պրուսայի թեմի առաջնորդն էր Պարզև վարդապետ Դանիելյանը: 10.Պանտրմա-Պալլքետերի թեմի առաջնորդն էր Կարապետ եպիսկոպոս Մազլունյանը: 11. Ադրիանապոլսի թեմի առաջնորդն էր Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը: 12.Զմյուռնիայի թեմի առաջնորդն էր Մատթեոս եպիսկոպոս Դուրյանը: 13.Տրապիզոնի թեմի առաջնորդն էր Գևորգ վարդապետ Թուրյանը: 14.Եդեսիայի թեմի առաջնորդն էր Արտավազդ վարդապետ Գալենտերյանը:

Օսմանյան կայսրության տարածքում կային 1388 հայկական եկեղեցի և 134 վանք: Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա էին 222 եկեղեցի և 12 վանք: Կիլիկիո կաթողիկոսությանը պատկանող թեմերն էին Յաճնի թեմ՝ առաջնորդ՝ Պետրոս եպիսկոպոս Սարաճյան, Ադանայի թեմ՝ առաջնորդ՝ Գևորգ եպիսկոպոս Արսլանյան, Անտիոքի թեմ՝ առաջնորդ՝ Մովսես վարդապետ Ոսկերիչյան, Մալաթիո թեմ՝ առաջնորդ՝ Մուշեղ քահանա Մուշեղյան:

Այնուամենայնիվ, ինչպես Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի, այնպես էլ Կիլիկիո կաթողիկոսի դիրքը Օսմանյան կայսրության տարածքում ազդեցիկ չէր: Եվ մեկը, և մյուսը անուժ գտնվեցին ինչ-որ ձևով ազդելու Թուրքիայի կառավարող վերին օղակների վրա՝ դադարեցնելու արևմտահայության նկատմամբ կիրառվող հալածանքները, հետագայում ցեղասպանությունը կանխելու նպատակով:

Պատերազմն սկսվելուն պես Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի առջև 1890-ական թթ. Թուրքիայի ոսմոնյաններից Ռուսաստան գաղթած արևմտահայերի խնդիրն առաջ եկավ: Խուսափելով ներքին թշնամի ունենալուց՝ Ռուսական կայսրությունում ապրող թշնամի պետությունների բոլոր հպատակները պետք է հավաքվեին և փակվեին համակենտրոնացման ճամբարում: Այս օրենքը տարածվում էր նաև արևմտահայ գաղթականների վրա: Արևմտահայերին նեղում էին և ձերբակալում Օլթիում, Ելիզավետգրադում, Վինիցայում, Բահմուտում, Խարկովում և այլ վայրերում: Դրիմի Ղարասուբազարում եկեղեցական ծխական դպրոցի բոլոր թուրքահպատակ աշակերտները հեռացվել էին դպրոցից:

1915 թ. հունվարի 11-ին կառավարությունն ընդունեց որոշում, ըստ որի. «Ռուսիո դեմ պատերազմող պետությանց, առանց բացառության, հպատակների առևտրական խանութները փակվելու են տարվույս ապրիլի 1-ից, իսկ գործարանական ձեռնարկները ենթարկվելու են իրավանց մեծագույն սահմանափակումների»<sup>54</sup>:

Ինչպես Մայր Աթոռը, այնպես էլ թեմակալ առաջնորդները մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի այդ օրենքը չկիրառվեր ռուսական պետության դաշնակցի՝ արևմտահայերի նկատմամբ:

Ցարիզմի հակահայկական քաղաքականությունն սկսվել էր դեռևս Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պահից: Նման քաղաքականությունը տարվում էր անխտիր բոլոր զավթված ժողովուրդների

<sup>54</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 306, թ. 2:

նկատմամբ: Բռնությունների և ծուլման քաղաքականությունը Ռուսական կայսրության կողմից կիրառվում էր նաև Լեհաստանում, Ֆինլանդիայում, Սիջին Ասիայում և Կովկասում: Այդ քաղաքականության հիմքում մեծառուսական ազգայնամոլությունն էր: Սակայն նման քաղաքականությունը հայ ժողովրդի հանդեպ չէր կարող երկար շարունակվել, որովհետև հայերը հանգամանքների բերումով դարձել էին ռուսական կայսերական քաղաքականության ուղեկիցը: Դրանով է բացատրվում այն իրողությունը, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հակահայկական քաղաքականությունը դադարեց և վերականգնվեց միայն Արևմտյան Հայաստանի գրավումից հետո, երբ դաշնակից հայերը, ավարտելով իրենց առաքելությունը, նորից դարձան ռուսաց ցարի հասարակ հպատակներ:

Հակահայկական դրսևորումները ռուս պետական գործիչների կողմից իրենց արտահայտությունը գտան, երբ կոմս Ի.Ի.Վորոնցով-Դաշկովին պաշտոնազրկեցին և նրա փոխարեն Կովկասի փոխարքա նշանակեցին մեծ իշխան Նիկոլայ Նիկոլակիչին: Նոր փոխարքան տանում էր հայատյաց քաղաքականություն՝ վստահ լինելով, որ գրավված Արևմտյան Հայաստանի տարածքն ավելի ճիշտ կլինի բնակեցնել ռուս վերաբնակիչներով, որոնք, իր կարծիքով, կլինեին ռուսական պետությանն ավելի հավատարիմ, քան հայերը: Ի կատարածելով նոր փոխարքայի հակահայ քաղաքականությունը՝ ռուսական բանակի հրամանատարությունը չէր թույլատրում հայերին վերադառնալ և բնակվել իրենց նախկին տեղերում: Արևմտահայաստանի շատ վայրերում հայոց եկեղեցիները վերափոխվում էին ռուս ուղղափառ եկեղեցիների, Ռուսական կայսրության զինվորական ղեկավարությունն արգելեց նոր կամավորական ջրկատների կազմավորումը<sup>55</sup>: Դրանով իսկ հայ ժողովրդին հասկացնում էին, որ այլևս նրան չեն վստահում: Եվ դա հակառակ այն բանի, որ 1914թ. նոյեմբերին Նիկոլայ Բ-ն Գևորգ Ե կաթողիկոսին վստահեցրեց, որ հայ ժողովրդին լավ ապագա է սպասում:

Հայ առաքելական եկեղեցին, լինելով հայ ժողովրդի ակնկալիքների արտահայտիչը, ամեն կերպ դիմադրում էր նոր փոխարքայի և այլ ռուս պետական գործիչների հայատյաց քաղաքականությանը:

Ռուսական կառավարության հակահայկական դրսևորումներից էր հայ ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքը: Պատերազմի ընթացքում ռուսական բանակին հանձնվել էին մեծ թվով հայեր՝ թուրքական բանակի զինվորներ, որոնք չէին կռվել ռուսների դեմ: Վեհափառ Հայրապետը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի նրանք ազատվեին գերությունից, սակայն այդ ջանքերն ապարդյուն էին: Գերիներն ազատվեցին միայն 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո:

Պատերազմի սկզբին թուրքերի՝ Սարիղամիշի վրա հարձակումից հետո, ինչպես նաև նոր հարձակումներից խուսափելով՝ Կովկասի ռուսական վարչակարգի դրդմամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանկարժեք հնությունների և ձեռագրերի մի զգալի մասը պետք է փոխադրվեր և պահվեր Մոսկվայում: Գևորգ Ե-ն, դիմելով Երևանի, Բաքվի և Թիֆլիսի հայ ազգաբնակչությանը,

<sup>55</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 81, թ. 37:



ցանկանում էր իմանալ նրանց կարծիքը հարստությունների փոխադրման մասին: Երևանի և Բաքվի թեմական ժողովները դեմ արտահայտվեցին Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի տեղափոխման կապակցությամբ, իսկ Թիֆլիսի թեմական ժողովը՝ կողմ<sup>56</sup>: Չնայած ռուսական զորքերն առաջ էին շարժվել դեպի Թուրքիայի տարածքի խորքը, այնուամենայնիվ եկեղեցական հնությունները՝ 150 արկղերով, 1915թ. փետրվարի 3-ին Մոսկվա տեղափոխվեցին, որտեղից մի մասը՝ մոտ 30 արկղ, անհետացավ<sup>57</sup>:

Աշխարհամարտն սկսվելուն պես և գաղթական արևմտահայերի հոսքի ուժեղացումից հետո Մայր Աթոռ Սբ.Էջմիածնի առջև գաղթականության օգնության խնդիր առաջացավ: 1914 թ. դեկտեմբերի 28-ին իր թ. 1990 հայրապետական կոնգրակով Գևորգ Ե-ն ստեղծեց «Եղբայրական օգնության Սբ. Էջմիածնի գլխավոր կարգադիր հանձնաժողովը»՝ Եփրեմ եպիսկոպոս Սուբիասյանի նախագահությամբ: Հանձնաժողովի անդամներ նշանակվեցին Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Բաբգեն վարդապետ Աղավելյանը և Վրթանես եպիսկոպոս Հակոբյանը:

Եղբայրական օգնության հանձնաժողովի մասնաճյուղեր ստեղծվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Տրապիզոնում, Վասպուրականում, Օդեսայում և այլն<sup>58</sup>: Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովի նախագահն էր խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, որը ղեկավարում էր ողջ Արևելյան Հայաստանում գտնվող գաղթականների օգնության գործը: Այդ գործում նրան աջակցում էր Համառուսական քաղաքների միության Երևանի կոմիտեն: Խորեն եպիսկոպոսը մեծ ջանքեր գործադրեց Երևանի թեմում որբանոցներ հիմնելու համար: 1916 թ. տվյալներով թեմում կար 15 որբանոց՝ 1145 որբերով: Գաղթական հայերին եկող օգնությունը գալիս էր Մայր Աթոռ և այստեղ բաժանվում էր ըստ պատկանելության: Գաղթականներին օգնելու գործում մեծ ջանքեր գործադրեցին գաղթական քահանաները: «Եղբայրական օգնության» հանձնաժողովը խնամում էր նաև արևմտահայ որբերին, ինչպես նաև զբաղվում Դեր-Չոր քված հայերի ճակատագրով:

1915թ. տվյալներով փրկված հայերի թիվը հետևյալն էր.

1. Պարսկաստանից գաղթականների թիվը. Ուրմիայից և մոտակա գյուղերից գաղթել էին 500 հայ և 2750 ասորի ընտանիքներ, Սալմաստից՝ 2950 հայ և 1800 ասորի ընտանիքներ, Խոյից՝ 320 հայ և 165 այլ քրիստոնյա ընտանիքներ, Թավրիզից՝ 3000 քրիստոնյա: Այսպիսով, Պարսկաստանից Ռուսաստան գաղթել էին 63000 մարդ, որոնցից կեսը հայեր էին: 2. Թուրքիայից՝ Ալաշկերտի և Իգդիրի վրայով գաղթած հայերի թիվը հասնում էր 25-ից 30 հազարի: 3. Թուրքիայից՝ Սարիղամիշի և Կաղզվանի վրայով գաղթած հայերը կազմում էին 30000 մարդ: 4. Թուրքիայի հետ սահմանակից գյուղերից և քաղաքներից՝ Արդվինից մինչև Սարիղամիշ ռուսահպատակ գաղթականների

<sup>56</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 110, թ. 7:

<sup>57</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1041, թ. 3; ֆ. 56, ց. 2, գ. 544, թ. 75:

<sup>58</sup> Մատենադարանի արխիվ, Տիրայր վարդապետի ֆ., քրթ. 132, վավ. 327 2-րդ:

թիվը ևս հասնում էր 30000-ի: Թուրքիայից և Պարսկաստանից գաղթած հայերի ընդհանուր թիվը հասնում էր 120000-ի, որին գումարելով ռուսահայատակ 30000 գաղթական ստացվում էր 150000 փախստական: Միայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և Մայրավանքի շուրջը կուտակվել էին 60000 գաղթական հայեր:

1914թ. նոյեմբերին հայ զինվորներին ոգևորելու համար Գեվորգ Ե-ն ռազմադաշտ ուղարկեց մի պատվիրակություն՝ վիրահայության առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Սովսիսյանի և Երևանի փոխթեմակալ Խորեն Եպիսկոպոս Սուրադբեկյանի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմի մեջ ընդգրկված էին նաև Կենտրոնական ազգային բյուրոյի փոխնախագահ և Ներսիսյան դպրոցի տեսուչ Յովսեփ Խունունցը, Երևանի քաղաքագլուխ Սմբատ Խաչատրյանը, Թիֆլիսի Վերայի գերեզմանատան եկեղեցու միաբան Նիկողայոս քահանա Բավոյանը, ինչպես նաև գրողներ Շիրվանզադեն և Յովհաննես Թումանյանը: Գլխավոր խնդիրը, որը կաթողիկոսը դրել էր պատվիրակության առաջ, ամեն կերպ պայմաններ ստեղծելն էր՝ օգնելու հայերին հենց տեղում Բայազետի, Բասենի շրջաններում և արգելել նրանց լքել իրենց գյուղերը և հեռանալ՝ դրա համար կազմակերպելով տեղի հայության ինքնապաշտպանության գործը: Պատվիրակությունը Էջմիածնից մեկնեց Օրգով-Բայազետ-Դիարդին-Ղարաքիլիսա և Ալաշկերտով ու Իգդիրի վրայով վերադարձավ Էջմիածին: Պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան ինչպես Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող ռուսական զինվորական-վարչական ղեկավարության, այնպես էլ արևմտահայ ազգաբնակչության հետ: Բայազետի գեներալ-նահանգապետ Բայադինի հետ հանդիպման ժամանակ Մեսրոպ սրբազանը բացատրեց նրան Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդրի մասին և հասկացրեց, որ ինքնավարությունը հայերին շնորհվելու է վերին աստանից՝ ցարից: Մեսրոպ Եպիսկոպոսը նրա ուշադրությունը հրավիրեց հայերին զինաթափելու, հայերի տները խուզարկելու փաստի վրա՝ ընդգծելով, որ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ քրդերի մոտ զենքը շարունակում է մնալ, և ոչ ոք չի զինաթափում նրանց: Ճանապարհորդության ժամանակ պատվիրակության անդամները հորդորեցին արևմտահայ ազգաբնակչությանը չլքել իրենց տները և չգաղթել դեպի ռուսական սահման, ինչպես նաև բաժանում էին իրենց հետ բերած տարբեր իրեր:

1916թ. մայիսին գաղթականների օգնության գործն ավելի լավ կազմակերպելու, ինչպես նաև հայ ժողովրդի առջև կանգնած կարևոր խնդիրները լուծելու համար հայ եկեղեցու հովանու ներքո Սանկտ Պետերբուրգում գումարվեց հայկական համագումարը: Համագումարի որոշումները հանգեցնում էին հետևյալին.

- ա) հայրենիք վերադարձող փախստականներին տրվելիք գումարը սահմանել 135 ռուբլի,
- բ) մանուկների համար որոշվեց հիմնել գյուղատնտեսական ապաստարաններ և գաղութներ,
- գ) որոշվեց գաղթականների հիմնահատակ կործանված տները վերաշինել,
- դ) բժշկության հարցերի կապակցությամբ որոշվեց որբանոցներ

ըը ենթարկել մշտական հսկողության:

Երբ 1916թ. գարնանը Մուշը գրավվեց ռուսական զորքի կողմից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առջև բարձրացվեց Մշո եկեղեցիներում հայ եկեղեցականների կողմից թաքցված եկեղեցական իրեղենը Էջմիածին բերելու հարցը: Մայր Աթոռի կողմից մի խումբ կազմվեց, որի ղեկավար նշանակվեց Մայր Աթոռի միաբան Իսահակ սարկավազ Տեր-Ղազարյանը: Տարոնի գաղթական ժողովրդին բժշկական և այլ օգնություն ցույց տալու համար խմբին տրվեց 20000 ռուբլի: Հասնելով Մուշ՝ արշավախումբը Մշո եկեղեցիների և վանքերի թաքստոցներում հայթայթեց տարբեր եկեղեցական իրեր, որոնք, հավաքելով ինն արկղերում, տեղափոխեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ փրկելով թուրքերի թալանից և ոչնչացումից: Նույնը կատարվեց նաև Վանի նահանգի տարածքում: Այստեղ նման հայամպաստ գործունեությունը ղեկավարում էր Հովհաննես վարդապետ Հյուսյանը, որին աջակցում էր Արմենակ Եկարյանը: Հովհաննես վարդապետի ջանքերով հայթայթվեց 87 ձեռագիր, որոնք նույնպես ուղարկվեցին Էջմիածին և պահվեցին Մայր Աթոռի մատենադարանում:

Կամավորական շարժման իր անգնահատելի աջակցությունն է բերել վիրահայության թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր Մովսիսյանը: Մինչև պատերազմի սկսվելը՝ 1914թ. օգոստոսը, Մեսրոպ Եպիսկոպոսի կողմից ղեկավարվող Թիֆլիսի հայ հասարակական գործիչների մի պատվիրակություն հանդիպեց Կովկասի փոխարքա կոմս Ի.Վորոնցով-Դաշկովին և հանդգեց նրան Կովկասի ռուսական բանակի կազմում հայ անվանի խմբապետներ զլխավորությամբ ստեղծել կամավորական ջոկատներ:

Մեսրոպ Եպիսկոպոսի առաջարկությամբ Անդրանիկը Բուլղարիայից եկավ Թիֆլիս, և 1914 թ. օգոստոսի 12-ին նրանց ընդունեց Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Միշլանսկին: Այս հանդիպման ժամանակ իր լուծումն ստացավ հայ կամավորական շարժման կազմակերպման հարցը: Այնպես որ հայկական ազգային զորամիավորումների կազմակերպման հարցը բարձրացվեց նաև հայ հոգևորականության կողմից:

Հայ կամավորական ջոկատների ստեղծմանը մեծապես նպաստեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: 1914 թ. հուլիսի 25-ին տեղի ունեցավ Մայր Աթոռի դիվանական խորհրդի նիստ՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, որտեղ մասնավորապես նշվեց, որ Եվրոպայում ընդհանուր պատերազմի դեպքում անխուսափելի է նաև ռուս-թուրքական պատերազմը: Կովկասի հայերի բռնած դիրքը պարզ էր՝ ամեն կերպ օժանդակել ռուսական զորքի հաղթանակին: Ելնելով այս եզրակացությունից՝ խորհրդի նիստում ընդունվեց խիստ զաղտնի որոշում. «Հայերի օրհասական կացության մասին մանրամասնորեն զեկուցել Տեր փոխարքային: Խորհրդակցել հայերի զգուշավոր զինման և ընդհանուր գործի կանոնավոր պաշտպանության մասին: Ամեն կերպ պետք է աշխատել հանդգել Տեր փոխարքային, որ այս խնդրի իրագործումն անհետաձգելի է՝ նկատի ունենալով թուրքերի բռնած դիրքը դեռևս ռուստանկական պատերազմը չսկսած»: Կամավորական շարժման կազմակերպման հարցին էր նվիրված նաև փոխարքայի մոտ ունեցած հատուկ խորհրդակցությունը, որին ներկա էին նաև վիրահայության հոգևոր առաջնորդ Մեսրոպ

եպիսկոպոս Տեր-Սովսիսյանը և հասարակական գործիչներ: Այնպես որ հայկական ազգային զորամիավորումների կազմակերպման հարցը բարձրացվեց նաև հայ հոգևորականության կողմից: Նոր կազմավորված ազգային զորամասերում իր ուրույն տեղն ունեցավ նաև զինվորական հովիվը: Հայ հոգևորականությունն իր մասնակցությունը բերեց Վանի ինքնապաշտպանական կռիվներին: Ձինվորական մարմնի աջակիցներից էր Աղթամարի վանքի վանահայր Դանիել վարդապետ Ջադոյանը, որը պատահաբար գալով Վան, այլևս չկարողացավ վերադառնալ: Ձինվորական մարմնի գործունեության կենտրոնը դարձավ առաջնորդարանը, որտեղ հաճախ լինում էր առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետը, որը Մատակարարման մարմնի մեջ էր:

1915 թ. ապրիլի սկզբներին Վասպուրականի հայ փախստականների մի մասն անցավ Պարսկաստան և մնաց Ատրպատականի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանի հովանավորության ներքո: Իմանալով Վանի հայության ծանր կացության մասին՝ նա հեռագրով խնդրեց Վեհափառին միջնորդել փոխարքային, որպեսզի ռուսական զորքը արագ հարձակման անցնի և օգնի հայերին:

1915թ. ապրիլի 15-ին և 16-ին հայ կամավորական ջոկատները խմբապետներ Քեռու, Խեչոյի, Դրոյի և Համազասպի գլխավորությամբ, Արարատյան զնդի հրամանատար Վարդանի ղեկավարությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ստացան Քևորզ Ե կաթողիկոսի օրհնությունը և մեկնեցին ռազմաճակատ:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը հայկական զորամիավորումներին հատկացրեց զինվորական քահանաներ: Որպես զինվորական քահանաներ՝ ռազմաճակատ մեկնեցին Սարիղամիշի ծխատեր Տաճատ քահանա Տեր Վարդանյանը, Արիստակես վարդապետ Ջուլյույանը, Խորեն վարդապետ Լազարյանը, Ռուբեն քահանա Բեկզուլյանը և ուրիշներ:

Հայ կամավորական ջոկատները և զինվորական քահանաները Կովկասի ռուսական բանակի հետ միասին Կովկասի սահմաններից հասան մինչև Վան, Մուշ, Էրզրում՝ ազատագրելով ողջ Արևմտյան Հայաստանը, ամենուրեք ցուցաբերելով խիզախության և քաջության օրինակներ:

1916թ. հայկական կամավորական ջոկատների փոխարեն կազմակերպվեցին վեց հրաձգային գումարտակներ, որտեղ որպես հոգևոր հովիվներ նշանակվեցին Ստեփանոս քահանա Պապանյանը, Եղիշե քահանա Տեր Պարսամյանը, Մարտիրոս քահանա Տեր Նահապետյանը, Աստվածատուր քահանա Մեղնիկյանը, Բագրատ քահանա Սուքիասյանը, Պետրոս քահանա Մատնիշյանը:

Հայերը Վանում առաջինը դիմադրություն ցույց տվեցին թուրքերին: Տեղի հայությունը, միասնական բռունցք դարձած, ղեկավարվելով աշխարհիկ և հոգևոր առաջնորդներով, լավագույնս կազմակերպեցին ինքնապաշտպանությունը: Ինքնապաշտպանության ղեկավար Արամի կողքին էին Վանի առաջնորդական փոխանորդ Եզնիկ վարդապետ Ներկարարյանը, Աղթամարի վանքի միաբան Դանիել վարդապետ Ջադոյանը և այլ հոգևորականներ, որոնք ոչ միայն ոգեկոչում էին և օրհնում կռվողներին, այլև զենքը ձեռքին կռվում

թշնամու դեմ:

Թուրքերը, չկարողանալով գրավել Վանը, շրջանցելով այն, հարձակվեցին Պարսկաստանից Ատրպատականի վրա՝ նպատակ ունենալով կոտորել ոչ միայն տեղի հայությանը, այլև բոլոր քրիստոնյաներին՝ ասորիներին, հույներին և այլն: Ստեղծված ծանր կացության մեջ բնաջնջման վտանգի առջև կանգնած Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը կազմակերպեց Ատրպատականի քրիստոնյա ազգաբնակչության փրկությունը: Նրան հնարավորության սահմաններում օժանդակում էին Երևանի, Նախիջևանի և Շարուր-Ղարալազյազի գավառների «Եղբայրական օգնության» համձնաժողովի ծյուղերը:

*Երրորդ գլուխը՝ «Փետրվարյան և Յոկտեմբերյան հեղափոխությունները և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը», բաղկացած է չորս ենթագլուխներից՝ ա) Փետրվարյան հեղափոխությունը և Հայ եկեղեցին, բ) Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանում տեղի ունեցած բռնությունները Հայ եկեղեցու հանդեպ, գ) Իրադրությունը Անդրկովկասում և Պարսկաստանում Յոկտեմբերյան հեղափոխությունից հետո, դ) Թուրքական գործերի 1918 թվականի հարձակումը Հայաստանի վրա և հայ հոգևորականության մասնակցությունը մայիսյան հերոսամարտերին:*

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Մայր Աթոռի միաբանությունը եկեղեցական ժողովներ հրավիրեց՝ ցանկանալով Հայ առաքելական եկեղեցուն բարենորոգումներ անցկացնել: Միապետության տապալումից հետո պետք է վերացվեր 1836թ. միապետության կողմից պարտադրված Հայ առաքելական եկեղեցու օրենսդրությունը (Պոլոժենին), նաև վերացվեին հայոց եկեղեցուն օտարոտի հիմնարկները՝ Սինոդը, կոնսիստորիաները, հոգևոր կառավարությունները և դրանց փոխարեն հիմնվեին նորերը: Հենց այդ պատճառով էլ 1917թ. մարտի 19-ին Մայր Աթոռի միաբանությունը դիմեց Գևորգ Ե-ին՝ նախաձեռնություն ցուցաբերել բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Նույն օրը Գևորգ Ե-ն դիվանական ժողով անցկացնելու հրաման արձակեց: Ժողովը գործադրության համար հետևյալ ժամանակավոր որոշումներն ընդունեց.

«1. Հայ առաքելական եկեղեցին, որպես ինքնուրույն և ինքնագլուխ, անկախ եկեղեցի, պետք է ամբողջության նկատմամբ, թե՛ կազմության և թե՛ ներքին վարչական կառավարության մեջ, ըստ ամենայնի ազատ լինի այն բոլոր սահմանափակումներից, որոնք առաջ են եկել 1836 թվին պետության կողմից հաստատված «Պոլոժենի»-ով, ինչպես և այնուհետև, մինչև ներկա շրջանը, տարբեր ժամանակներում տրված կառավարական հրահանգներով, շրջաբերականներով, ժամանակավոր կանոններով և ցուցումներով, որոնք օրենքի ուժ են ստացել և գործադրության անցել:

2. Մինչև եկեղեցու ոգուն և ներկայիս պահանջներին համապատասխան ներքին կանոնադրության խմբագրելն ու օրինական կարգով գործադրության մեջ մտնելը, ընթացիկ գործերը վարել հայ եկեղեցու սովորական կարգով, միայն նոր պաշտոնների հոգևոր իշխանության կողմից նշանակելու ժամանակ հայտնել կառավարության ոչ հավանության և կամ հաստատության, այլ ի գիտություն միայն»:

Այս և այլ հարցեր պետք է բարձրացվեին 1917թ. հունիսին բացվող ռուսահայոց հոգևորականության համագումարում: Սակայն մինչև ռուսահայոց հոգևորականության համագումար հրավիրելը ռուսահայոց թեմերում անցկացվեցին թեմական համագումար-ժողովներ: Մայիսի 25-ին Թիֆլիսում բացվեց վիրահայ հոգևորականության համագումարը: Համագումարն ընդունեց եկեղեցական բարեփոխության ծրագրի նախագիծ, որը հանգում էր հետևյալին.

1. «Պոլոժենիան» Հայ եկեղեցուն տվել է «Գրիգորյան» և «Լուսավորչական» անուններ, որոնք չեն համապատասխանում պատմական ճշմարտությանը: Հայ եկեղեցին հիմնված է առաքյալների քարոզչությամբ և ջանքերով, հետևաբար պետք է կոչվի «Հայ Առաքելական եկեղեցի» և ոչ «Գրիգորյան» կամ «Լուսավորչական»: 2. Հայ Առաքելական եկեղեցու պետը, որպես առաքելական հաջորդ, Ամենայն Հայոց կաթողիկոսն է, որն ընտրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայացած համազգային ժողովով և հավատարմությամբ երդում է տալիս հայ ազգին և եկեղեցուն: 3. Վերացվում են նախկին միապետությունից մնացած հիմնարկությունները՝ Սինոդը, կոնսիստորիան և հոգևոր կառավարությունները, որոնց փոխարեն հայ հոգևորականության և ժողովրդի ընտրությամբ հիմնվում են գերագույն, եկեղրոնական և աշխարհական անդամներից ընտրված իրենց դիվանները: 4. Կուսակրոնությունը պարտադիր չէ. հոգևորականն՝ անկախ աստիճանից, սկսած աշխարհական վիճակից մինչև կաթողիկոսություն ամուսնանալու իրավունք ունի: Հոգևորականն ամուսնանում է այնքան անգամ, որքան եկեղեցին թույլ է տալիս աշխարհականին: 5. Քահանայի առջև բաց են եկեղեցական նվիրապետության բոլոր աստիճաններն ու պաշտոնները, մինչև իսկ կաթողիկոսությունը: Հայ Առաքելական եկեղեցին կաթողիկոսական աստիճանին բարձրացրել է, այսուհետև էլ կարող է բարձրացնել նաև արժանավոր աշխարհականին: 6. Անհրաժեշտ է բարեփոխել հոգևորականի ապրուստի հայթայթման եղանակը: Նա ձրի պետք է կատարի իր սրբազնագույն պաշտոնը, սակայն որպես պաշտոնյա, իր ապրուստի ապահովությունը, իր դիրքի աստիճանի և ընտանեկան վիճակի համեմատ, պետք է ստանա եկեղեցուց ու համայնքից: 7. Հոգևորականին պետք է տալ քաղաքացիական բոլոր իրավունքները՝ կոչմանը համապատասխան: Նա որպես քաղաքացի ազատ է պաշտոնավարությունից դուրս երևալ քաղաքացիական որոշ տարագով: 8. Եկեղեցու ներքին ու արտաքին բարեկարգության ու բարեգարդության անհրաժեշտությունը ժամանակակից ոգով ու կենդանի լեզվով պահանջում է հիմնական փոփոխություն մտցնել ծիսակատարության և աստվածապաշտության կարգի մեջ: Պետք է սիրելի և գրավիչ դարձնել եկեղեցին թե՛ ներքուստ և թե՛ արտաքուստ՝ տալով նրան այն պարզությունը, ինչպես էր օտար ազդեցությունից առաջ, ուժ տալով եկեղեցական երաժշտությանը, երգեցողությանը և ավետարանական կենդանի խոսքին: 9. Տասնութ դարի պատկառելի հնություն ունեցող Հայ առաքելական եկեղեցին մինչև այսօր չունի լիակատար, ամփոփ և համակարգված օրենսգիրքը՝ կողբքս, որն ընդգրկեր, արտացոլեր ազգային-հոգևոր-եկեղեցական-կրթական ամբողջ կյանքը. նա չունի իր պաշտոնյաների, հիմնարկությունների, համայնքի գործունեության և գործավարության, այլև բոլոր փոխհարաբերությունների մանրամասն սահմանադրությունը: Անհրաժեշտ է ձեռնհաս աշխարհական և

հոգևորական անդամներից կազմված մարմնի միջոցով պատրաստել այդ օրենսգիրքը՝ համապատասխան բաժանմունքներով և ստորաբաժիններով՝ դատաստանական, տնտեսական, իրավական, կալվածական, հողային, ամուսնական, ապահարզանի, ծխական-ընտրողական, կրթական, վանական և այլն, և այլն: 10. Անհրաժեշտ է ամենամոտ ապագայում գումարել ազգային-եկեղեցական ժողով<sup>59</sup>:

Թիֆլիսի համագումարում ընդունված նախագծի ոչ բոլոր կետերն էին Հայաստանյայց եկեղեցու համար ընդունելի: Անժխտելի է, որ նախագծի 4-րդ և 5-րդ կետերը նորարարական էին և առաջադեմ հայացքներ էին պարունակում: Բայց այնուամենայնիվ այդ նորույթները, լինելով զուտ աշխարհական, անընդունելի էին Հայաստանյայց եկեղեցու համար: Չորրորդ կետը կարող էր ընդունելի լինել բողոքական կամ էլ որևիցե աղանդավորական եկեղեցուն քարոզելու համար: Իսկ հինգերորդ կետը միայն ընդունելի էր քահանայական դասի համար, որովհետև ուժեղացնում էր դիրքը և լիազորությունները:

Հայ եկեղեցու բարենորոգումներին էր նվիրված 1917 թ. հունիսի 12-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում բացված ռուսահայ հոգևորականության համագումարը: Համագումարի հարցերն էին.

1. Ա. Ստեղծել մի ներքին կապ կուսակրոն և աշխարհիկ հոգևորականության միջև:

Բ. Ստեղծել ներքին սերտ և ցանկալի կապեր հայ ժողովրդի և հոգևորականության միջև:

Գ. Եկեղեցին իբրև գործոն հայ ազգային եկեղեցական կյանքում ներկայումս:

Դ. Հայ հոգևորականության մտավոր բարոյականության բարձրացման խնդիր:

2. Կուսակրոն հոգևորականության վերաբերյալ հարցեր:

Ա. Կուսակրոն հոգևորականության վերակենդանացման խնդիր:

Բ. Վանքերի, իբրև ազգային-կրթական-բարոյական ազդակների վերածնության խնդիր:

Գ. Վանական ներքին վարչական կազմակերպություն:

Դ. Վանական կանոնադրություն:

Ե. Կալվածական խնդիր:

2. Հայ միջնակարգ և տարրական դպրոցների խնդիրներ<sup>60</sup>:

Համագումարում նշվեց, որ ազգային-քաղաքական գործերում ազգի ներկայացուցիչը և տերը միշտ համարվել և համարվում է Ամենայն հայոց կաթողիկոսը: Համագումարում բարձրացված հարցերը վերջնական լուծում և վավերացում պետք է ստանային Ազգային-եկեղեցական ժողովում, սակայն քաղաքական փոփոխությունները նախկին Ռուսական կայսրության տարածքում արգելք հանդիսացան սպասվող Ազգային-եկեղեցական ժողովի գումարմանը:

Ռուսաստանում իշխանության եկած ժամանակավոր կառավարությունը,

<sup>59</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ.457, ք. 52:

<sup>60</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ.459, ք. 55-62:

ինչպես նաև Անդրկովկասյան Հատուկ կոմիտեն (ՕՁԱԿՈՄ-ը) դեմոկրատական բարենորոգումները տեսնում էին հայ եկեղեցու վանքապատկան և եկեղեցական հողերի առգրավման մեջ և այդ մասին որոշում արձայնեցին, որի դեմ խիստ ելույթ ունեցավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը: Մայր Աթոռին սատար կանգնեց ինչպես Թիֆլիսի, Նոր Նախիջևանի, այնպես էլ Սփյուռքի հայությունը:

Տեսնելով, որ ՕՁԱԿՈՄ-ը այնուամենայնիվ ուզում է հողերի համայնացում կատարել, կաթողիկոսը 1918թ. հունվարի 10-ին թիվ 1116 կոնդակ հռչակեց, որտեղ նշում էր, որ նույնիսկ միապետական 1836 թվականի հայ եկեղեցու օրենսդրության թ. 1116 հոդվածում նշված էր, որ «Լուսավորչական հայ եկեղեցիներն իրավունք ունեն անշարժ կալվածքների տիրապետության», իսկ 1141 հոդվածի երրորդ կետում նշված էր, որ «Լուսավորչական հայ եկեղեցիների գույքերի և կալվածքների կարգն ու եղանակը» վերապահվում է Սբ. Էջմիածնի Սինոդին<sup>61</sup>:

Միայն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հզոր դիմադրության շնորհիվ Անդրկովկասյան նոր իշխանությունները հրաժարվեցին էջմիածնապատկան հողերը գրավելուց:

1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը հեռացվեցին Կովկասից և Պարսկաստանից: Ատրպատականի հայ ազգաբնակչությունը մնաց առաջացած թուրքական զորքերի և Ղարաղաղի ու Նախիջևանի խաների կողմից կոտորածի սպառնալիքի առջև:

1918թ. հունվարի 13-ին Էջմիածնում Թավրիզից Ներսես եպիսկոպոս Մելիք-Թամազյանից հեռագիր ստացվեց, որով նա հաղորդում էր, որ Ղարաղաղի հայկական երեսուն գյուղերի դրությունը սարսափելի է: Խաները վայրագություններ են անում, և նա խնդրում էր Նորին Սրբությունից միջնորդել պարսից շահին՝ Ղարաղաղի խաներին սանձահարելու և պատժելու<sup>62</sup>:

Հայերին սատար կանգնելու համար Վեհափառ հայրապետը հեռագրեց պարսից շահին, որպեսզի նա կանխի ինչպես հարձակվող թուրքական զորքի բռնությունները, այնպես էլ տեղի թուրքերի ոտնձգությունները հայերի հանդեպ:

Հայերի նկատմամբ բռնությունները տեղի էին ունենում նաև Ադրբեջանում: Ազգամիջյան ընդհարումներ հրահրողների թվում էր անդրկովկասյան մահմեդականների հոգևոր առաջնորդ մուֆտին: 1918 թ. սեպտեմբերին Բաքուն գրավելուց հետո թուրքերը կոտորեցին տեղի հայ բնակչության մի զգալի մասին, կողոպտեցին և թալանեցին բոլոր հայ եկեղեցիները:

Ադրբեջանի հայության այս ծանր օրերին Շամախի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը, մնալով իր նըստավայրում, կիսեց հայերին բաժին ընկած բոլոր դժվարությունները և միայն գրչի միջոցով էր պայքարում հայության արժանապատվության համար:

1918թ. թուրքական իշխանությունները նոր զինված արշավանք սկսեցին Արևելյան Հայաստանի դեմ՝ իրենց առջև նպատակ ունենալով ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանը մաքրել հայ ազգաբնակչությունից, իսկ

<sup>61</sup> ՀԱԱ, ֆ. 48, ց.1, գ.962, թ. 1-4:

<sup>62</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց.1, գ.172, թ. 1:



ազատված տարածքը ենթարկել իրենց ազդեցությանը:

Թուրքական զորքերի առաջխաղացման պատճառով նորից հայաթափվեցին Արևմտյան Հայաստանի մահանգները և գավառները, դատարկվեցին և ավերվեցին վերականգնված գյուղերը:

Մայիսի 15-ին գրավելով Ալեքսանդրապոլը՝ թուրքերը շարժվեցին դեպի Երևան, Ղարաքիլիսա, Ապարան և Ախալքալաք: Տեղի ունեցած մայիսյան բոլոր հերոսամարտերի ժամանակ հայ զինվորի կողքին կանգնեցին հայ հոգևորականության ներկայացուցիչները: Հայ հոգևորականությունը զենքը ձեռքին ոգևորում էր հայ զինվորին և բարձրացնում նրա մարտական ոգին:

Սարդարապատի հերոսամարտին մասնակցեցին Գարեգին եպիսկոպոս Յովսեփյանը, Ջավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, Կորյուն վարդապետ Սահակյանը, Խորեն վարդապետ Լազարյանը, Թադևոս վարդապետ Հարությունյանը, Յովհաննես վարդապետ Տեր-Միքայելյանը, Եզնիկ վարդապետ Ներկարարյանը, մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանի ծառայող Մ. Գևորգյանը և ճեմարանի ուսանող Ե. Աճեմյան-Վանեցի<sup>63</sup>:

Հայկական զնդերի զինվորական քահանաներն էին՝ Գարեգին քահանա Մելիք-Ղազարյանը, Ստեփան քահանա Պապայանը, Գարեգին քահանա Թադևոսյանը և ուրիշներ: Սարդարապատի ճակատամարտին մասնակցեցին նաև ծխատեր քահանաներ իրենց զրլխավորած աշխարհագորային ջոկատներով՝ Կոտայքի Թագագյուղի ծխատեր Տեր Ջաքար քահանա Տեր-Հարությունյանը, Էջմիածնի Գրամփա գյուղի ծխատեր Տեր Յովհաննեսը և Ջաֆարապատ գյուղի ծխատեր Տեր Սահակ քահանան:

Ինչպես Սարդարապատում, Բաշ Ապարանի հերոսամարտում ևս հայ հոգևորականությունն իր մասնակցությունն ունեցավ: Բաշ Ապարանի մարտին մասնակցեց Փամբի գյուղի ծխատեր Գևորգ քահանա Հայրապետյանն իր ծխականներից կազմված ջոկատով, ինչպես և Ապարանի շրջանի գործակալ և Գյուլլուջայի ծխատեր Յովհաննես ավագ քահանա Տեր-Մինասյանի իր գյուղի, ինչպես նաև Մուշից, Սասունից, Ալաշկերտից և Բայազետից Ապարան գաղթած հայերից հավաքագրված ջոկատով:

Արարքիլիսայի մարտին իր մասնակցությունն ունեցավ Դարպաս գյուղի ծխատեր Կոմիտաս քահանա Սարգսյանը, որը հավաքելով իր ծխականներին և Հաջիդարայի և Ղշլաղի գյուղացիներին՝ դիմադրություն կազմակերպեց:

**Եզրակացություն** մեջ հանրագումարի են բերված հայ առաքելական եկեղեցու՝ 1914-1918 թթ. պատմության ուսումնասիրության արդյունքները՝ հետևյալ եզրահանգումներով.

1. Հայ եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին զորացրեց իր դիրքն ու ազդեցությունը՝ շնորհիվ կշռադատված և խելամիտ քաղաքականության, ինչպես նաև ստեղծեց բարիդրացիական փոխադարձություններ Կովկասի փոխարքայության և ռուսական կառավարական օղակների հետ: Այդ ժամանակ հայ եկեղեցին ապրում էր իր արծաթե դարը՝ ունենալով արևմտահայ հավատացյալ հատվածը՝ իր վանքերով, եկեղեցիներով, կալվածքներով և այլ

<sup>63</sup> Ս.Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը..., էջ 43:

ունեցվածքով: Ռուսական կայսրության տարածքում հայ եկեղեցու առանձնահատկությունը և տարբերությունն այլ եկեղեցիներից այն էր, որ ուներ ներքին ինքնավարություն և հոգևոր հովվապետ՝ ի դեմս Ամենայն հայոց կաթողիկոսի: Հայ եկեղեցու շնորհիվ «Դաշնակցություն» կուսակցության գործը կասեցվեց, և այդ գործով ձերբակալված ազատատենչ և հայրենասեր հայերն ազատ արձակվեցին: Վեհափառ հայրապետը, կրելով Ամենայն հայոց հովվապետական տիտղոսը, խտրականություն չէր դնում իր ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների միջև: Հենց դա էլ պատճառ դարձավ, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Գևորգ Ե-ն լրջորեն և հետևողականորեն վերստին սկսեց զբաղվել Հայկական հարցի լուծմամբ՝ արևմտահայ նահանգներում անցկացնելով բարենորոգումների ծրագիր:

2. Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես և հատկապես հայոց եղեռնի իրականացման ժամանակ ամենադաժան հարվածը թուրքերը հասցրին արևմտահայ հոգևորականությանը: Գիտակցելով, որ ազգապահպանության, հայրենասիրության և դիմադրության քարոզչությունն ընդհանրապես հայ եկեղեցու նախապատվությունն է, թուրք կառավարությունն արմատախիլ էր անում այն՝ զրկելով հայ ժողովրդին հոգևոր ղեկավարությունից: Թուրքերի զոհը դարձան Կարնո հոգևոր առաջնորդ Սմբատ Եպիսկոպոս Սաստեթյանը, Տրապիզոնի առաջնորդ Գևորգ վարդապետ Թուրյանը, Շապին-Գարահիսարի առաջնորդ Վաղինակ վարդապետ Թորիկյանը, Բաբերդի առաջնորդ Անանիա վարդապետ Հազարապետյանը, Մշո առաջնորդ Վարդան վարդապետ Հակոբյանը, Տիգրանակերտի առաջնորդ Սկրտիչ վարդապետ ճլղաթյանը, Խարբերդի առաջնորդ Պսակ վարդապետ Տեր-Խորենյանը և հայ եկեղեցու բազմաթիվ այլ հովվապետներ: Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ջավեն արքեպիսկոպոս Եղիայանը Մեծ եղեռնի օրերին մինչև վերջ մնաց խնդրողի և ոչ թե ընդդիմադիր պահանջողի դերում: Հայցողի դերում էր նաև Կիլիկիո Սահակ Բ Խապայան կաթողիկոսը, որն ընդդիմացավ Կիլիկիայի հայության զինված դիմադրությանը:

3. Թուրքիան հայոց էթնոսից ազատելու խնդիրը երիտթուրքական կառավարության կողմից բարձրացվել էր պետական քաղաքականության մակարդակի:

Թուրք դահիճները մտածում էին, որ միջազգային հանրությանը հայերի կոտորածները կներկայացնեն որպես պատերազմի հետևանք: Բոլոր հայաբնակ մարզերում թուրք կառավարիչները հայտարարում էին միայն պատերազմի պատճառով տեղի հայության բռնազաղթի մասին, և ոչ մի խոսքով չէին հիշատակվում կոտորածն ու բնաջնջումը: Ամենուրեք բռնազաղթի և կոտորածի եղանակները նույնն էին:

4. Այնուամենայնիվ, գործում էին նաև տեղական դիմադրության օջախներ: Օրինակն ակնառու էր՝ Վանի հայության ինքնապաշտպանությունը: Հայերի հաղթանակով ավարտվեց Մուսա լեռան հայերի ինքնապաշտպանական մարտը: Շապին-Գարահիսարում, Սասունում, Եօզղաթում, Ջեթունում, Ուրֆայում, Ֆընտըճագում, չնայած հայերի կողմից կազմակերպված հզոր ինքնապաշտպանությանը, թուրքերը, այնուամենայնիվ, կարողացան ճնշել նրանց և կազմակերպել հայ ազգաբնակչության տեղահանումն ու ջարդը: Օրհասական

այդ օրերին բոլոր հայոց թեմերում միշտ հայ ժողովրդի կողքին էր հոգևորականաց դասը՝ թեմակալ առաջնորդներով և ծխատեր քահանաներով:

5. Հայ եկեղեցին, լինելով համահայկական, հայապահպան, հայահավաք միակ կազմակերպությունը, զբաղվեց նաև արևմտահայերի մշակութային և եկեղեցական ժառանգությունը փրկելու գործով: Տեղեկանալով, որ արևմտահայոց վանքերում և եկեղեցիներում հայերը եղեռնի ժամանակ պահել են եկեղեցական սպասքը և մշակութային այլ կոթողներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում արշավանք էին կազմակերպում՝ հայթաթելու և Ս. Էջմիածին բերելու ազգային այդ հարստությունները: Նման արշավախումբ ուղարկվեց Մուշ, որը ինչպես Մուշ քաղաքի եկեղեցիներում, այնպես էլ Ս. Կարապետ վանքում հայտնաբերեց տասնյակ թանկարժեք իրեր՝ հիրավի ազգային կոթողներ: Հայ ժողովրդի մշակութային և եկեղեցական, պատմական նշանակություն ունեցող կոթողներ վանի տարածքում հայթաթելու էր Հովհաննես վարդապետ Հյուսյանը, որը գտավ և Մայր Աթոռ բերեց հին ձեռագրեր և եկեղեցական իրեր: Եկեղեցին փրկում էր արևմտահայոց պատմական-մշակութային բեկորները, որոնք վկայում էին ազգի մշակութային անցյալի մասին:

6. Պատերազմի հենց առաջին օրերին թե՛ արևմտահայերը և թե՛ Ատրպատականի հայությունը կանգնեցին թուրքերի կողմից ոչնչացման սպառնալիքի առջև: Փրկվելով թուրքական յաթաղանից՝ Ատրպատականի հայությունը բռնեց գաղթի ճանապարհը: Տեղի հայության, ինչպես նաև ասորի ազգաբնակչության փրկության գործը ղեկավարեց Ատրպատականի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանը: Ատրպատականի հայությունը գաղթեց Նախիջևան և Սյունիք: Այստեղ նրանց օգնում էր հայ եկեղեցու կառուցվածքում ձևավորված Նախիջևան-Շարուր-Դարալազյազ-Սալմաստի եղբայրական օգնության հանձնաժողովը: Գաղթականներին կերակրում և տալիս էին պետական նպաստ:

7. Հայոց եղեռնի ժամանակահատվածում հայ եկեղեցու գործունեությունը ձեռք բերեց իրեն ոչ բնորոշ գծեր: Պատրաստ չլինելով արևմտահայերի զանգվա-ծային գաղթին՝ Մայր Աթոռը 1914թ. դեկտեմբերի 28-ին ստեղծեց գաղթական հայերին օգնող «Եղբայրական օգնության Ս. Էջմիածնի գլխավոր կարգադիր հանձնաժողով», որի մասնաճյուղեր ստեղծվեցին Երևանում, Նոր Նախիջևանում, Ալեքսանդրապոլում, Ախալքալաքում և այլ վայրերում: Հայ եկեղեցին պատմական այս ծանր ժամանակներում գտնվեց իր բարձրության վրա և իր ողջ ունեցվածքն ի սպաս դրեց հայ ժողովրդին սովից և հիվանդություններից փրկելու գործին: Գաղթական հայության ծանր վիճակով և հատկապես արևմտահայ որբերի ճակատագրով զբաղվում էր Երևանի թեմի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը: Նրա հովանու ներքո թեմում բացվեցին 15 որբանոցներ, որտեղ հավաքվեցին հազարից ավելի որբ երեխաներ:

8. Հայ եկեղեցին հատուկ ուշադրություն էր դարձնում արևմտահայ բնակչության հակաթուրքական պայքարի, ինչպես նաև արևմտահայությանը զինելու գործին: Պատերազմը սկսվելուն պես Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը դիմեց Կովկասի ռուսական վարչակազմին՝ առաջարկելով ստեղծել հայ կամավորական ջոկատներ: Հայ եկեղեցին առաջարկում էր կազմակերպել

ջոկատներ՝ անվանի խմբապետների գլխավորությամբ, որոնք պետք է մտնեին ռուսական կովկասյան բանակի կազմի մեջ: Հայկական ազգային զորամիավորումների կազմակերպման խնդիրը բարձրացվեց ամենից առաջ հայ եկեղեցու կողմից: Հայ եկեղեցին ոչ միայն օրհնում էր հայ կամավորներին, այլև իր սպասավորներին ուղարկում ռազմաճակատ: Ազգին ոգևորելու համար մեծ նշանակություն ունեցավ հայ զինվորական քահանաների՝ կռվի դաշտում հայտնվելը: Առաջին երեցը, որը դարձավ զինվորական քահանա, Սարիղամիշի Տաճատ քահանա Տեր-Վարդանյանն էր: Ինչպես ծխատեր քահանաները, այնպես էլ Մայր Աթոռի վարդապետները գնացին ռազմաճակատ՝ դառնալով զինվորական հովիվներ: Հայ զինվորական քահանաները գտնվում էին ինչպես Կովկասի ռազմաճակատի զորամասերում, այնպես էլ հյուսիսային և այլ ռազմաճակատներում: 1918թ. մայիսյան հերոսամարտերին հայ հոգևորականությունը ժողովրդի հետ համախուժ պայքարեց հարձակվող թշնամու դեմ: Սարդարապատի ճակատամարտին իրենց մասնակցությունը բերեցին Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Ջավեն եպիսկոպոս Բաբայանը, Եզնիկ վարդապետ Ներկարարյանը և ուրիշներ:

9.1917թ. ռուսական հեղափոխությունները բացասաբար անդրադարձան հայ եկեղեցու վրա: Ժամանակավոր կառավարության կողմից ընդունված անհավասարակշիռ օրենքները խարխլում էին եկեղեցու միասնությունը, արմատավորում եկեղեցու ներսում բարեփոխումներ անցկացնելու գաղափարներ, որոնք ավելի բնորոշ էին բողոքական, քան հայ առաքելական եկեղեցուն: Հայ եկեղեցին ինքն էլ ցանկանում էր ազատվել միապետությունից մնացած այսպես կոչված «Պոլոժենիայի» հողվածներից, որը խիստ սահմանափակում էր նրա գործունեությունը: Այդ սպասումներով էլ հայ եկեղեցին 1918 թ. մայիսին ողջունեց հայոց Առաջին Հանրապետության հռչակումը:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

ա) Մենագրություններ

1. Հայ հոգևորականության մասնակցությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Ե., ԵՊՀ հրատ., 1999, 47 էջ:
2. Հայ եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2003, 343 էջ:

բ) Հոդվածներ

3. Սուրբ Էջմիածինը, հայերը և Վատիկանը, Էջմիածին, 1994, №8, էջ 88-100:
4. Կյանք մահվանից հետո, Էջմիածին, 1995, № 1, էջ 30-41:
5. Հայ եկեղեցին 1914 թվականին, Էջմիածին, 1996, № 4, էջ 51-62:
6. Հայոց եկեղեցին և հայոց ցեղասպանությունը, Էջմիածին, 1998, №4, էջ 90-95:
7. Մի հրատարակության առիթով, Էջմիածին, 1999, № 5-6, էջ 118-122:
8. Եկեղեցին պետությունից անջատվելու հետևանքները Եվրոպայում և

- Խորհրդային Հայաստանում, «Հայոց եկեղեցին և պետություն», միջազգային գիտաժողովի նյութեր (մարտ, 2000), Ե., 2000, էջ 257-266:
9. Հայոց ցեղասպանությունը և հայ եկեղեցին (1915-1918 թթ.), ՊԲՀ, Ե., 2000, № 1, էջ 22-29:
  10. Հայ առաքելական եկեղեցու և աշխարհիկ կառույցների փոխհարաբերությունները պատմական հոլովություն, Հայկական բանակ, Ե., 2001, № 1-2, էջ 58-68:
  11. Русская православная церковь в Армении, ՊԲՀ, 2001, № 1, էջ 115-123:
  12. Կովկասի ռազմաբեմից ռուսական զորքերի հեռանալը և Անդրկովկասում ու Պարսկաստանում իրադրության փոփոխությունը, ԼՀԳ, Ե., 2002, № 1, էջ 81-89:
  13. Участие казачьих войск в укреплении южных рубежей Российской империи, ՊԲՀ, Ե., 2002, № 3, էջ 137-145:
  14. Հայոց ցեղասպանությունը և հայ առաքելական եկեղեցին, Հայոց ցեղասպանության պատմագրության հարցեր, Ե., 2002, № 6, էջ 87-93:
  15. Грузинское население Восточной Армении (конец XIX – нач. XX в.), ՊԲՀ, Ե., 2004, № 3, էջ 111-117:
  16. Փետրվարյան հեղափոխությունը և Հայ եկեղեցին, Էջմիածին, 2004, № 5, էջ 100-113:
  17. Сопротивление армян геноциду в годы Первой мировой войны, Новая и новейшая история, М., 2007, № 1, стр. 218-225:.
  18. К истории деятельности русской православной церкви в Армении, «Научные ведомости Белгородского государственного университета. Серия «История. Политология. Экономика», Белгород, 2008, № 2 (42), Вып. 6, стр. 43-48:
  19. Помощь России армянам, подвергшимся геноциду со стороны Турции в годы первой мировой войны, Новая и новейшая история, М., 2008, № 3, стр., 218-220.
  20. Помощь российских благотворительных и медицинских организаций армянам, подвергшимся геноциду в годы 1 Мировой войны, «Вестник Поморского университета. Серия «Гуманитарные и социальные науки», Архангельск, 2008, № 12, стр. 97-100:
  21. Роль религиозного фактора в осуществлении геноцида армян в 1915г. «Научный журнал «Вестник РУДН». Серия «История России», М., 2008, № 3, стр. 93-99:
  22. Участие армянского духовенства в I Мировой войне на стороне России, «Известия Российского государственного педагогического университета им. А. И. Герцена: общественные и гуманитарные науки», Санкт-Петербург, 2008, № 12 (81), стр. 120-131:
  23. Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի շուրջ, Էջմիածին, 2010, № 12, էջ 14-36:
  24. Հայ եկեղեցու սահմանադրության խնդիրը, Էջմիածին, 2011, № 4, էջ 15-28:  
Степанянц Степан Мигранович  
Деятельность Первопрестольного Эчмиадзина в годы Первой мировой

войны (1914-1918 гг.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук  
по специальности 07.00.01- История Армении

Защита состоится в 29-го ноября 2011 г. в 14<sup>00</sup> по адресу:  
0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4, на специализированном  
совете 004 при Институте истории НАН РА.

## РЕЗЮМЕ

История Армянской апостольской церкви нового и новейшего периода является одной из малоизученных тем армянской историографии, исследование которой имеет большое научное и политическое значение.

Основной целью предлагаемой нами диссертационной работы является освещение деятельности Первопрестольного Эчмиадзина и епархий армянской церкви в такой непростой для армянского народа исторический период, как годы Первой мировой войны.

Основным источником при написании диссертации послужили архивные первоисточники, хранящиеся в Национальном архиве Армении, в архиве Института древних рукописей – Матенадаране, а также в архиве музея литературы и искусства имени Е. Чаренца.

Диссертационная работа состоит из введения, трех глав, заключения, библиографии, именных и географических указателей.

В работе впервые представлена численность армянского духовенства в епархиях как на территории Российской так и Османской империи, структура епархий, состояние имущества, движимого и недвижимого капитала, количество церквей, приходов и верующих.

Исследованы взаимоотношения Первопрестольного Эчмиадзина с администрацией Кавказского наместничества, правительством и министерством иностранных дел Российской империи, а также с правительствами Британской империи, Французской республики, Германской империи, Австрийской империи, государства Иран.

Широко и глубоко освещена патриотическая деятельность Первопрестольного Эчмиадзина по оказанию помощи западноармянскому населению, подвергнутому геноциду со стороны Османской Турции. Армянские священнослужители первыми оказали помощь западноармянским беженцам. Еще 20 ноября 1914г. католикосом Геворком V был создан Главный Распорядительный комитет “Братская помощь армянским беженцам”. Отделения этого комитета были созданы как по всей территории Российской империи, так и за границей.

Братия Эчмиадзинского монастыря взяла на себя всю заботу о беженцах. Армянское духовенство оказывало медицинскую и продовольственную помощь армянским беженцам обретшим убежище и покой у стен Первопрестольного монастыря, открыло больницы для больных и приюты для сирот, а также питательные пункты для

голодающих. Патриаршие покаяния также были отданы беженцам. Многие представители армянского духовенства опекавшие беженцев в больницах умерли от заразных болезней, и в их числе: епископ Епрем Сукиасян, архимандриты Бабкен Агавелян, Ваган Мегреци и другие.

В исследовании глубоко освещено участие армянского духовенства в формировании армянских добровольческих воинских частей в составе русской Кавказской армии в период Первой мировой войны, в создании структуры военных церквей, принявших участие в войне в составе армянских добровольческих дружин. Освещено участие армянского духовенства во всех самооборонительных боях на территории Западной Армении.

Особо подчеркивается роль армянского духовенства в период майских героических боев 1918 года.

Вне рамок данного исследования не осталась подвижническая и патриотическая деятельность главы Армянской церкви католикоса Геворка V Суренянца, возглавлявшего Армянскую церковь в один из самых сложных периодов как в истории армянского народа, так и в истории Армянской церкви. Всесторонне исследована церковная и общественная деятельность видных архиереев Армянской церкви: викария Ереванской патриаршей епархии епископа Хорена Мурадбекяна, епархиального предводителя Атропатаканской епархии епископа Нерсеса Мелик-Тангяна, епархиального предводителя армянской епархии Грузии епископа Месропа Тер-Мовсисяна и др.

Особый акцент в исследовании делается на послереволюционный период 1917-1918 гг. Находясь в тяжелых условиях послевоенной разрухи, голода и под угрозой новой агрессии со стороны Турции, армянское духовенство возглавляемое католикосом Геворком V взяло на себя ответственность за армянский народ и продолжило им руководить до прибытия из Тифлиса армянского правительства.

Неоценима роль армянского духовенства в становлении молодой Армянской республики.

Данное исследование имеет не только научное, но важное практическое значение. Приведенные в исследовании многочисленные выявленные и введенные в научный оборот материалы, могут быть использованы историческими, армяноведческими, богословскими и религиоведческими кафедрами вузов, а также в научно-исследовательских институтах как материалы по истории Армянской апостольской церкви и написанию церковных энциклопедий.

Stepanyanc Stepan Mihran

The activity of the Throned Echmiadzin  
during the First World War (1914-1918)

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the  
specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on November 29, 2011, 14<sup>00</sup>,  
at the session of the Specialized Council 004 by the Institute of History NAS RA.  
(Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

#### SUMMARY

The history of Armenian Apostolic Church of the new and latest periods is one of the insufficiently studied themes of Armenian historiography the research of which has great scientific and political importance.

The main goal of the proposed thesis is to illuminate the activity of The Throned Echmiadzin and the Diocese of Armenian Church during such difficult historical period for Armenian people as the years of First World War.

Archival original materials stored in the National Archive of Armenia, the Museum of Ancient Manuscripts-Matenadaran as well as the E. Charents Museum of Literature and Arts were the major source used to write the thesis.

The thesis consists of introduction, three chapters, conclusion, bibliography, author and geographical indexes.

It is for the first time the work represents quantity of Armenian clergy within the diocese both in Russian and The Ottoman Empires, the structure of diocese, the state of property, movable and immovable assets, quantity of churches, parishes and believers.

The work also includes study of relationships between The Throned Echmiadzin with administration of Caucasian viceroyalty, government and Ministry of International Affairs of Russian Empire, as well as with the governments of British Empire, French Republic, German Empire, Austrian Empire, Iran.

There is a deep and wide illumination of patriarchal activity of The Throned Echmiadzin with regard to rendering of assistance to population of Western Armenia which had been subjected to genocide by Ottoman Empire. The Armenian clergy was the first to help Western Armenian refugees. In 1914 The Throned Echmiadzin established a general administrative committee named Fraternal Assistance to Armenian refugees. The departments of the mentioned committee were established not only across the territory of Russian Empire but also abroad. The Brethren of Ecmiadzin Monastery took the functions of a guardian of the refugees. The Armenian Clergy assisted with food and medical help to Armenian refugees, opened hospitals for sick and shelters for orphans, as well as feeding stations for hungry. Hospitals were located also in patriarchal chambers. Some



representatives of clergies who guarded refugees died of infection got from refugees. Bishop Ephrem Sukiasian, Archimandrites Babken Aghavelian , Vahan Meghreci and others were among them.

The study deeply illuminates the participation of Armenian Clergy in the process of formation of Armenian volunteer military units in the structure of Russian Caucasian army during the First World War, establishment of the structure of military chaplains which took part in the war in the Armenian volunteer units. The activity of Armenian Clergy is presented in all self-defense battles on the territory of Western Armenia is also presented. The role of Armenian Clergy during May heroic battles of 1918 is particularly emphasized.

The study also includes feat and patriotic activity of the head of Armenian Church the Catholicos of all Armenians, Gevorg the Fifth Surenyants who headed Armenian Church during one of the difficult periods not only of Armenian people but also Armenian Church. The church and public activity of the following distinguished bishops of Armenian Church is comprehensively studied: the vicar of Yerevan patriarchal diocese bishop Khoren Muradbekyan, the leader of atropatakan diocese bishop Nerses Melik-Tangyan, the leader of Armenian diocese of Georgia bishop Mesrop Ter-Movsisyan and others.

The patriotic activity of National Delegation under the guidance of Poghos Nubar Pasha for resolution of Armenian issue established and guided by Catholicos Gevorg the Fifth is illuminated as well.

The study particularly emphasizes post-revolutionary period from 1917 to 1918. Being in terrible conditions of post-war devastation, hunger and under the threat of new aggression from Turkish side Armenian Clergy headed by Catholicos Gevorg the Fifth took responsibility for Armenian people and continued to head it before the arrival of Armenian government from Tiflis. The role of Armenian Clergy is very important also in the becoming of the young Armenian republic.

This study not only has scientific but also practical importance. Numerous materials which have been detected and introduced in the scientific sphere may be used by historical, armenianological, theological and religious departments of colleges and universities, research institutes, as materials on the history of Armenian Apostolic Church and writing of church enciclopedia.